ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ
Արևելյան Եվրոպայի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի հանրապետությունների տնօրինություն
Ուկրաինա, Մոլդովա, Բելառուս և Հարավային Կովկաս

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ

ՀԱՅԱՍՏԱՆ

Ազգային ինդիկատիվ ծրագիր

2011-2013

Հապավումներ

ՊԿՄԶՀԾ	Պետական կառավարման մարմինների զարգացման համապարփակ ծրագիր
ԽԿԿ	Խոշտանգման կանխարգելման կոմիտե
ԵՌՓ	Երկրի ռազմավարական փաստաթուղթ
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ
ԽՀԱԱՀ	Խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիր
ԱԳ	Արևելյան գործընկերություն
ԵՀ	Եվրոպական հանձնաժողով
ՆԵԲ	Ներդրումների եվրոպական բանկ
ԵՀՔ	Եվրոպական հարևանության քաղաքականություն
ԵՀՔ ԳԾ	ԵՀՔ գործողությունների ծրագիր
ԵՀԳԳ	Եվրոպական հարևանությանա և գործընկերության գործիք
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՄՖԿ	Միջազգային ֆինանսական կազմակերպություններ
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ՀԶՆ	Հազարամյակի զարգացման նպատակներ
ԱԻԾ	Ազգային ինդիկատիվ ծրագիր
ԳՀՀ	Գործընկերության և համագործակցության համաձայնագիր
ԿՏԲԿ	Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն
ՍԲՍ	Սանիտարական և բուսասանիտարական
ՏԱ	Տեխնիկական աջակցություն
ՏԱԱՊՀ/TACIS	Տեխնիկական աջակցություն ԱՊՀ-ին
ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալություն
ՄԿՈՒ	Մասնագիտական կրթություն և ուսուցում
ՀԲ	Համաշխարհային բանկ

Բովանդակություն

Մաս առաջին. Համառոտ ակնարկ……5
Մաս երկրորդ. Ներածություն. Կիսամյակային վերլուծություն/Միջանկյալ ամփոփիչ զեկույց.....……9

1. Ներածություն……9

Մաս երրորդ. Ինդիկատիվ ծրագիր 2011-2013 թթ.-ի համար…..……..14

2. Հիմնական առաջնայնություններ և նպատակներ……...14
3. Ինդիկատիվ բյուջե……16
4. ԱԻԾ 2011-2013 թթ.-ի առաջնային ոլորտները ……16

4.1. Առաջնային ոլորտ 1. Ժողովրդավարական կառույցներ և լավ կառավարում

4.1.1. Ենթաառաջնայնություն 1.1
Ժողովրդավարական ինստիտուտներ, օրենքի գերակայություն և դատական համակարգի բարեփոխում……17

4.1.2. Ենթաառաջնայնություն 1.2
Հանրային կառավարման բարեփոխում, ներառյալ տեղական ինքնակառավարումն ու էլեկտրոնային կառավարումը, պետական ֆինանսական կառավարումը, կոռուպցիայի դեմ պայքարը……..19

4.1.3. Ենթաառաջնայնություն 1.3
Մարդու իրավունքներ և հիմնարար ազատություններ, քաղաքացիական հասարակության զարգացում……...20

4.2. Առաջնային ոլորտ 2. Առևտուր և ներդրումներ, կարգավորիչ դաշտի համապատասխանեցում և բարեփոխումներ……...21

4.2.1. Ենթաառաջնայնություն 2.1
Առևտրի ու ներդրումների խթանում, մասնավորապես՝ շուկայի զարգացման ու կարգավորիչ դաշտի բարեփոխումների միջոցով, ներառյալ՝ գործարար միջավայրի, հարկային ու մաքսային ոլորտներում, ինչպես նաև աջակցություն ՀՀ-ԵՄ ԽՀԱԱՀ նախապատրաստական աշխատանքներին……...22

4.2.2. Ենթաառաջնայնություն 2.2
Ոլորտային կանոնակարգիչ բարեփոխումներ և վարչական կարողությունների հզորացում……..…24

4.2.3. Ենթառաջնայնություն 2.3
Սահմանների համապարփակ կառավարում և միգրացիա……25

4.3. Առաջնայնության ոլորտ 3. Սոցիալ-տնտեսական բարեփոխումներ և կայուն զարգացում……26

4.3.1. Ենթաառաջնայնություն 3.1
Տարածքային և գյուղական համայնքների զարգացում……27

4.3.2. Ենթաառաջնայնություն 3.2
Աջակցություն տրանսպորտի, էներգետիկայի, բնապահպանության, տեղեկատվության և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտներում ենթակառուցվածքների զարգացմանը……..28
4.3.3. Ենթաառաջնայնություն 3.3
Մարդկային զարգացում, ներառյալ՝ գիտություն, կրթություն և սոցիալական ծառայություններ……29
5. Իրականացում……30
5.1. Արևելյան գործընկերության ինստիտուցիոնալ զարգացման համապարփակ ծրագիր.....33
6. Ռիսկեր և հիմնավորումներ……35
7. Համապատասխանեցում, համաձայնեցում և խորհրդատվություն……35
8. Հավելվածներ……..37
8.1. Հավելված 1. Տվյալներ երկրի վերաբերյալ……37
8.2. Հավելված 2. ՀՁՆ տվյալներ……...38
8.3. Հավելված 3. Ծրագրի ֆոկուսային/ոչ ֆոկուսային ոլորտների ամփոփիչ աղյուսակ……..40
8.4. Հավելված 4. Հայաստանում դոնորների համակարգման ընթացիկ աշխատանքների մատրիցա……..42
8.5. Հավելված 5. Միջանկյալ ամփոփիչ զեկույցի մշակման գործընթացի նկարագրություն……..44
8.6. Հավելված 6. Շրջակա միջավայր……..45

Մաս առաջին. Համառոտ ակնարկ

Ազգային ինդիկատիվ ծրագիր 2011-2013 թթ.-ի համար

2007-2013 թթ.-ի Երկրի ռազմավարական փաստաթուղթը (ԵՌՓ) Հայաստանի համար սահմանում է ԵՄ աջակցության ամբողջական նպատակները, ներառյալ դրա գործիքներն ու ծրագրերը: Հիմնվելով ԵՌՓ վրա՝ ընդունվեց 2007-2010 թթ.-ի Ազգային ինդիկատիվ ծրագիր ԵՀԳԳ համար, որը իրականացման փուլում է: Ինչպես նախատեսվում է ԵՀԳԳ կանոնակարգմամբ, տարվա կեսին ԵՌՓ ամփոփում ձեռնարկվեց: Կիսամյակային ամփոփումը հաստատեց մինչև 2013 թ.-ը ԵՄ կողմից Հայաստանին ցուցաբերվելիք աջակցության ռազմավարական առաջնայնությունների վավերականությունը: Սրա հիման վրա 2010-2013 թթ.-ի համար նախատեսված նոր ԱԻԾ նախագծվեց Հանձնաժողովի կողմից: Այն սահմանում է Հայաստանին ԵՄ երկկողմ աջակցության առաջնային ոլորտները:

Ինդիկատիվ գումարի չափը 2011-13 թթ.-ի համար 157.3 մլն եվրո է:

Կիսամյակային ամփոփում

ԵՌՓ հիմնական նպատակը Հայաստանի և ԵՄ միջև չափազանց սերտ համագործակցության զարգացմանն աջակցելն է ԵՀՔ համատեքստում և հիմնված Գործընկերության և համագործակցության համաձայնագրի (ԳՀՀ) և ԵՄ-Հայաստան ԵՀՔ Գործողությունների ծրագրի սահմանած նպատակների վրա:

2008 թ.-ի վերջին հանձնաժողովի ձեռնարկած կիսամյակային ամփոփմամբ եզրահանգվեց, որ Հայաստանի և ԵՄ միջև հարաբերությունները զգալիորեն խորացել են 2007 թ.-ից ի վեր, սակայն ԵՌՓ-ում նախանշված հիմնական առաջնայնությունները էապես նույնն են մնացել: Ոչ մի զգալի փոփոխություն տեղի չի ունեցել ԵՄ-Հայաստան երկկողմ հարաբերությունների իրավական շրջանակում, այսինքն 1999 թ.-ի Գործընկերության ու համագործակցության համաձայնգիրը ուժի մեջ է մնում, մինչև իրավահաջորդ փաստաթղթի համաձայնեցումը: Ակնկալվում է, որ ԵՄ-Հայաստան հարաբերություններն ավելի կընդլայնվեն Արևելյան գործընկերության ներքո բարելավված պայմանագրային հարաբերությունների հեռանկար ունեցող Գործակցության համաձայնագրի տեսքով, ներառյալ Խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիրը, եթե պայմանները կատարվեն: Հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման գործընթացի արդյունքում կարող է բացվել սահմանը, ինչից կարող են սահմանն անցնելու գործողությունների

հետ կապված նոր կարիքներ բխել, այդ իսկ պատճառով այդ գործընթացը ևս արտացոլված է այս ծրագրում:

Զարգացումները Հայաստանում

2007 թ.-ից ի վեր Հայաստանը առաջընթաց է ապրել ժողովրդավարական զարգացման և առևտրի ու տնտեսական բարեփոխումների հարցում, այդ թվում դատական համակարգի, Մարդու իրավունքների պաշտպանի, հարկային ու մաքսային դաշտերի, ֆինանսական ծառայությունների և մրցակցության քաղաքականության ոլորտներում: Սակայն մարտահրավերը օրենսդրությունն արդյունավետ կերպով գործադրելն ու կոռուպցիայի դեմ պայքարելն է: Քաղաքակիրթ հասարակությունը մտահոգություն է արտահայտել 2008 թ.-ի ընթացքում լրատվական միջավայրի ու հավաքների ազատության վատթարացման առնչությամբ:

Հայաստանը զգալի տնտեսական աճ է գրանցել 2006 թ.-ից ի վեր (13.3 % 2006-ին; 13.7 % 2007-ին և 6.8 % 2008-ին) և հասել լավ արդյունքների աղքատության նվազեցման հարցում (նվազում 25 %-ով մինչև 2008 թ.-ը): Սակայն այն ծանր փորձության ենթարկվեց ֆինանսատնտեսական ճգնաժամի կողմից 2008թ.-ի վերջին: Ճգնաժամի միջինից երկարատև ազդեցությունը մեծապես կախված կլինի արտաքին գործոններից: Մինչ այս ինդիկատիվ ծրագրի գործադրումից առաջ որոշակի վերականգնում է ակնկալվում, ճգնաժամը կարող է շարունակել իր ազդեցությունը բնակչության ամենախոցելի խավերի վրա և աղքատությունը կարող է դարձյալ գլուխ բարձրացնել գյուղական շրջաններում:

Զարգացումները ԵՄ-Հայաստան հարաբերություններում

Ինչպես ցույց են տալիս ԵՄ-Հայաստան խորացող հարաբերությունները և Հայաստանի կողմից Արևելյան գործընկերության սատարումը, ընդհանուր առմամբ ՀՀ կառավարության պատրաստակամությունը ԵՀՔ Գործողությունների ծրագրի իրականացման հանդեպ մեծ է: ԵՄ-Հայաստան խորացող հարաբերությունների հեռանկարը Արևելյան գործընկերության շրջանակներում ավելի խոր երկկողմ ներգրավվածությամբ հավակնոտ օրակարգ է ենթադրում, ներառյալ պայմանագրային հարաբերությունների բարելավումը: Եվրահանձնաժողովը հոկտեմբերի 30-ին բանակցային դիրեկտիվների նախագիծ է ընդունել Հայաստանի հետ Գործակցության համաձայնագիրը բանակցելու համար: Այս բանակցությունների ինչպես քաղաքական, այնպես էլ առևտրային կողմերը բարեփոխումների առնչությամբ շարունակական առաջընթաց և որոշակի պայմանների բավարարում կպահանջեն, որոնցում ԵՄ սատարման կարիքը կզացվի:

<u>Ինդիկատիվ ծրագիր 2011-13 թթ. համար</u>

Այս ինդիկատիվ ծրագիրը սատարում է Արևելյան գործընկերության առաջնայնությունների և ԵՀՔ Գործողությունների ծրագրի ու ԳՀՀ հիմնական նպատակների երկկողմ իրականացմանը, ինչպես օրինակ ավելի խոր քաղաքական համագործակցություն և առևտրատնտեսական հարաբերություններ Հայաստանի ու ԵՄ միջև, սոցիալական և տնտեսական զարգացում Հայաստանի շրջանների միջև և շարժունակության ու անվտանգության ավելացում ապրանքների և մարդկանց տեղաշարժը հեշտացնելու համար: Այս ծրագիրը հաշվի է առնում նաև տարածաշրջանում փոփոխվող իրավիճակների հանգամանքը, ինչպես օրինակ հայ-թուրքական սահմանի բացումը:

Առաջնային ոլորտ 1. Ժողովրդավարական կառույցներ և լավ կառավարում

Ժողովրդավարական կառույցների հզորացումը, օրենքի գերակայությունը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հարգանքը ԵՄ-Հայաստան հարաբերությունների հիմնական ոլորտներն են, որոնք անմիջապես կապված են Գործողությունների ծրագրի 1 և 2 առաջնային ոլորտների և 4.1 և 4.5 գլուխների հետ:
2008 թ.-ի նախագահական ընտրություններին հաջորդած քաղաքական ճգնաժամն ընդգծում է ժողովրդավարեցման գործընթացի ամրացման և Հայաստանի քաղաքական համակարգում ու կառավարման մեջ եվրոպական արժեքների որդեգրման անհրաժեշտությունը: Արևելյան գործընկերության շրջանակներում ժողովրդավարության սկզբունքների ու արժեքների, օրենքի գերակայության և մարդու իրավունքների հարգանքի ուղղությամբ պատշաճ առաջընթացը պայմանագրային հարաբերությունների բարելավման հիմնական նախապայմաններն են:

Արդարադատության համակարգի բարեփոխման բյուջետավորումը նախաձեռնվել է 2009 թ.-ի վերջին ԵՀԳԳ 2008 Ամենամյա գործողությունների ծրագրի շրջանակներում: Այս ոլորտին ցուցաբերվող առաջնային աջակցությունն արդարացված է՝ հաշվի առնելով դրա զգալի կարիքները և քաղաքական կարևորությունը ԵՄ-Հայաստան հարաբերությունների համար:

Առաջնային ոլորտ 2. Առևտուր և ներդրումներ, կարգավորիչ դաշտի համապատասխանեցում և բարեփոխումներ

Առաջնայնության այս ոլորտը ուղղակիորեն վերաբերում է ԵՄ-Հայաստան ԵՀՔ Գործողությունների ծրագրի 4 և 5 առաջնային ոլորտներին և 4.4, 4.5 ու 4.6 գլուխներին՝ կապված արևտրի ու ներդրումների դյուրացման և սահմանի կառավարման ու միգրացիայի հետ:

ԵՄ-Հայաստան հարաբերություններում առևտուրն ու ներդրումները խթանելը շարունակում է խոշոր առաջնայնություն դիտվել: Աջակցումը առևտրին ու ներդրումներին, կարգավորիչ դաշտի համապատասխանեցումը և բարեփոխումների կարիքը 2011-2013 թթ.-ի ծրագրման ժամանակահատվածում հատուկ ուշադրության է արժանի՝ հաշվի առնելով Գործակցության համաձայնագրի համար բանակցություններ մեկնարկելու հեռանկարը, այդ թվում ԽՀԱԱՀ կնքելու նպատակը: Շեշտը պետք է դնել ինստիտուցիոնալ և վարչական կարողությունների հզորացման վրա՝ կանոնակարգային մերձեցում ապահովելով առևտրի հետ կապված ԵՄ և միջազգային օրենքներին ու չափանիշներին և արդյունավետ կերպով գործադրելով մոտարկված օրենքներն ու չափանիշները:

Եվրահանձնաժողովի ընդլայնված աջակցության կարիքը կլինի, եթե Թուրքիայի հետ սահմանի բացման հեռանկարն իրականություն դառնա մինչև ծրագրման ժամանակահատվածի վերջը:

Առաջնային ոլորտ 3. Սոցիալ-տնտեսական բարեփոխում և կայուն զարգացում

Սոցիալ-տնտեսական բարեփոխումներն ու կայուն զարգացումը ՀՀ կառավարության առջև կանգնած հիմնական մարտահրավերներից են և ուղղակիորեն կապված են ԵՄ-Հայաստան Գործողությունների Ծրագրի հետ, մասնավորապես 3 Առաջնային ոլորտի ու 4.7 և 4.3 գլուխների:

Տարածքային զարգացումը Արևելյան գործընկերության առաջնայնություններից է իր երկկողմ ձևաչափով, որն առաջարկում է տարածքային զարգացման ծրագրեր, ուղղված, օրինակ՝ մարդկային, ինչպես նաև փոքր ու միջին բիզնեսի զարգացմանը: Տեղական ենթակառուցվածքների կարիքները բավարարելը կնպաստի սոցիալ-տնտեսական բարեփոխմանն ու մրցակցությանը Հայաստանում:

Ինդիկատիվ բյուջե

Այս Ազգային ծրագրի Ինդիկատիվ բյուջեն 157.3 մլն եվրո է երեք տարվա համար: Արևելյան գործընկերության ներքո Պետական կառավարման մարմինների զարգացման համապարփակ ծրագրի (ՊԿՄԶՀԾ) հատկացման համար նախատեսված կլինի առնվազն 32 մլն եվրո, որով Գործակցության համաձայնագրերի համար հիմքեր կնախապատրաստվեն, ներառյալ ԽՀԱԱՀ կնքման նպատակը: Առնվազն 7 մլն եվրո նախատեսվում է հատկացնել Արևելյան գործընկերության շրջանակներում Ներդաշնակեցման քաղաքականությանը:

Ծրագիրը կենտրոնանում է երեք առաջնային ոլորտների վրա.

Առաջնային ոլորտ 1. Ժողովրդավարական կառույցներ և լավ կառավարում	30-35 %	47-55 մլն եվրո
Առաջնային ոլորտ 2. Առևտուր և ներդրումներ, կարգավորիչ դաշտի համապատասխանեցում և բարեփոխում	20-25 %	31-39 մլն եվրո
Առաջնային ոլորտ 3. Սոցիալ-տնտեսական բարեփոխում և կայուն զարգացում	40-45 %	63-71 մլն եվրո
Ընդամենը	100 %	157 մլն եվրո

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Ներածություն

2011-2013 թթ.-ի Ինդիկատիվ ծրագիրը Հայաստանի 2007-2013թթ.-ի ԵՌՓ կիսամյակային ամփոփման արդյունքն է, որը 1999 թ.-ին ձեռնարկվել է Եվրահանձնաժողովի կողմից: Կիսամյակային ամփոփումը վերլուծել է հիմնական քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացումները Հայաստանում, ԵՀՔ Գործողությունների ծրագրի գործադրումը, ԵՄ նոր քաղաքականությունների զարգացումը և Հայաստանին ԵՄ նախկին աջակցության արդյունքներն ու ազդեցությունը, և եզրակացրել, որ ԵՌՓ-ն Հայաստանի համար հիմնականում վավեր է մնում (տես Հավելված 1-ի ցուցակը):

Հայաստանին ԵՄ աջակցության հիմնական նպատակը, ինչպես պահանջում է ԵՌՓ-ն, ԵՄ և Հայաստանի միջև չափազանց սերտ հարաբերությունների զարգացմանն աջակցելն է ԵՀՔ համատեքստում և ելնելով ԳՀՀ-ում, ԵՄ-Հայաստան Գործողությունների ծրագրում և ավելի նոր Եվրոպական հարևանության քաղաքակնության մեջ սահմանված նպատակներից: Արևելյան գործընկերության ապահոված լրացուցիչ շրջանակը ընդլայնում է քաղաքական, առևտրային ու տնտեսական հարաբերությունների հետագա խորացումը:

Զարգացումները Հայաստանում

2007 թ.-ից ի վեր Հայաստանը առաջընթաց է ապրել ժողովրդավարական զարգացման և առևտրի ու տնտեսական բարեփոխումների հարցում, այդ թվում դատական

համակարգի, Մարդու իրավունքների պաշտպանի, հարկային ու մաքսային դաշտերի, ֆինանսական ծառայությունների և մրցակցության քաղաքականության ոլորտներում: Հայաստանը շարունակում է հավատարիմ մնալ հետագա եվրոպական ինտեգրմանը:

2008 թ.-ի փետրվարին նախագահական ընտրությունների անցկացումը «հիմնականում համապատասխանում էր միջազգային չափանիշներին» ԵԱՀԿ գնահատականի համաձայն: Սակայն, հետընտրական իրավիճակի հարթումը մտահոգության տեղիք էր տվել, մասնավորապես հաջորդած արտակարգ իրավիճակն և իրենց քաղաքական իրավունքն իրականացնող ակտիվիստների ձերբակալումը: 2008 թ.-ի մարտին նախագահական ընտրություններին հաջորդած քաղաքական ճգնաժամը ժողովրդավարական ազատությունների ու մարդու իրավունքների մի շարք ժամանակավոր սահմանափակումների հանգեցրեց և դանդաղեցրեց քաղաքական բարեփոխումները երկրում: Ընտրական գործընթացի մի շարք թերություններ են արձանագրվել 2009 թ.-ի մայիսի 9-ին Երևան քաղաքի ավագանու ընտրություններին:

2007 թ.-ին առաջընթաց է գրանցվել նաև օրենսդրական բարեփոխման մեջ, ներառյալ Ազգային Ժողովի ընդլայնված իշխանությունը և բարելավումները տեղական ինքնակառավարման մարմիններում, դատական համակարգի անկախացումն ու լրատվամիջոցների ազատացումը: Սակայն օրենսդրության արդյունավետ իրականացման և կոռուպցիայի դեմ պայքարի հարցում իրական առաջընթացի կարիքը դեռ զգացվում է: Քաղաքակիրթ հասարակությունը բարձրաձայնել է 2008 թ.-ի ընթացքում լրատվական միջավայրի ու հավաքների ազատության հետ կապված իրավիճակի վատթարացման լուրը: Նոր քաղաքականությունների մշակման տեսակետից 2008 թ.-ին նոր դատական համակարգ մտցվեց: 2008 թ.-ին ընդունված Կայուն զարգացման ծրագիրը մինչև 2021թ.-ը փոխարինեց Աղքատության նվազեցման ռազմավարության փաստաթղթին: Կառավարությունը շեշտը դնում է առևտրի և տնտեսական բարեփոխման վրա՝ նվազեցնելով անհավասարությունն ու աղքատությունը շրջաններում և պայքարելով կոռուպցիայի դեմ: Կառավարության համար առաջնային ոլորտները հարկային, մաքսային և էլեկտրոնային կառավարման ոլորտներն են: Կառավարությունը էներգիայի արդյունավետ օգտագործման հարցերը ևս կարևորում է: Տարածքային վարչական բարեփոխումը կայացած տարածքային կառույցներով ավարտուն տեսքի է բերվում:

Հայաստանը զգալի տնտեսական աճ է գրանցել 2006 թ.-ից ի վեր (13.3 % 2006 թ-ին; 13.7 % 2007 թ.-ին և 6.8 % 2008 թ.-ին) և աղքատության նվազեցման լավ արդյունքների հասել (նվազում մինչև 25 % 2008 թ.-ին): Սակայն ֆինանսատնտեսական ճգնաժամը 2008 թ.-ի վերջին ծանր հարված հասցրեց տնտեսությանը: 2009 թ.-ի հունվար-սեպտեմբերին երկիրը 18.3 % բացասական տնտեսական աճ ունեցավ, բյուջեի

պակասորդը 5.7 %-ի հասավ 2009 թ.-ի առաջին քառորդում, իսկ դրամական փոխանցումները նվազեցին 30 տոկոսով 2008 թ.-ի միևնույն ժամանակահատվածի համեմատ: Ճգնաժամի միջինից երկարաժամկետ ազդեցությունը մեծապես կախված կլինի արտաքին գործոններից և դժվար կանխատեսելի: Մինչ այս ինդիկատիվ ծրագրի գործադրումից առաջ որոշակի վերականգնում է ակնկալվում, ճգնաժամը կարող է շարունակել իր ազդեցությունը բնակչության ամենախոցելի խավերի վրա, և աղքատությունը կարող է դարձյալ գլուխ բարձրացնել գյուղական շրջաններում:

Զարգացումները ԵՄ-Հայաստան հարաբերություններում

Ներկայիս ԵՌՓ հաստատումից ի վեր Հայաստանի և ԵՄ միջև հարաբերությունները խորացել են և ակնկալվում է, որ կշարունակեն ընդլայնվել Արևելյան գործընկերության ներքո, ներառյալ բարելավված պայմանագրային հարաբերությունների հեռանկարը Գործակցության համաձայանգրի տեսքով: Հնարավոր Գործակցության համաձայնագիրը կարող է զգալիորեն ընդլայնել Հայաստան-ԵՄ հարաբերությունները համագործակցության բոլոր ոլորտներում, ներառյալ ԵՄ և Հայաստանի միջև Խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի կնքումը, եթե բոլոր անհրաժեշտ պայմանները բավարարվեն:

Մինչև նոր համաձայանգիր չբանակցվի և ուժի մեջ մտնի, ԳՀՀ-ն, որն ուժի մեջ է 1999 թ.-ի հուլիսի 1-ից, կշարունակի մնալ Հայաստանի և ԵՄ միջև համագործակցության իրավական հիմքը: ԵՄ-Հայաստան Գործողությունների ծրագիրը, ընդունված 2006 թ.-ի նոյեմբերի 14-ին, սահմանում է փոխադարձ կերպով համաձայնեցված քաղաքական առաջնայնությունները համագործակցության համար: Ընդհանուր առմամբ Հայաստանը շարունակում է հավատարիմ մնալ ԵՀՔ Գործողությունների ծրագրի իրականացմանը և ԵՄ ավելի սերտ ինտեգրմանը: Սա սատարվում է ԵՄ բարձրակարգ խորհրդատվական խմբի կողմից, որն իր աշխատանքներն սկսել է 2009 թ.-ի մարտից: Հայաստանը սատարում է 2009 թ.-ի մայիսին Պրահայում մեկնարկած Արևելյան Գործընկերությանը, որը ԵՄ և վեց հարևան Արևելյան երկրների միջև սերտ համագործակցության հնարավորություն է առաջարկում:

Փոփոխությունները ԵՄ/ԵՀ արտաքին հորիզոնական քաղաքականություններում հիմնականում ընդգրկված են ներկայիս ԵՌՓ-ում: Իրադրության փոփոխությունն ընդգրկված է «համագործակցությունը հատուկ ոլորտներում, ներառյալ տրանսպորտը, էներգետիկան և շրջակա միջավայրը» առաջնայնության ոլորտում: ԵՌՓ-ում ընդգրկված է նաև միգրացիան, այդ թվում վերաընդունման ու ապաստարանի, ահաբեկչության ու կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հետ կապված հարցերը, ինչպես նաև մարդկանց և թմրանյութերի առևտուրը: ԵՌՓ-ն առաջնայնություն ունի առևտրի հետ կապված հարցերում, տնտեսական և սոցիալական բարեփոխում, աղքատության նվազեցում և կայուն

զարգացում: ԵՌՓ-ն այս Ինդիկատիվ ծրագրում վերանայվել է Արևելյան գործընկերության ապահոված նոր քաղաքական շրջանակը ստանձնելու համար՝ շեշտը դնելով տարածաշրջանային քաղաքականության, համապարփակ ինստիտուցիոնալ զարգացման, շարժունակության և անվտանգության, ինչպես նաև առևտրի հետ կապված հարցերի վրա: Բացի այդ, ԵՌՓ-ն կարող է հարմարվել հայ-թուրքական սահմանի բացման հետևանքով տարածաշրջանում տեղի ունեցող փոփոխություններին:

Այս ազգային ինդիկատիվ ծրագիրը սատարում է ԳՀՀ, ԵՀՔ Գործողությունների ծրագրի և Արևելյան գործընկերության հիմնական նպատակների իրականացմանը, մասնավորապես ավելի խոր քաղաքական համագործակցության և Հայաստանի աստիճանական առևտրային ու տնտեսական ինտեգրմանը ԵՄ-ին, Հայաստանի շրջանների սոցիալ-տնտեսական զարգացմանը և շարժունակության ու անվտանգության ընդլայնմանը ապրանքների ու մարդկանց[1] շարժը հեշտացնելու համար: Եթե ԵՀՔ Գործողությունների ծրագիրը փոխարինվի մեկ այլ փաստաթղթով այս Ազգային ինդիկատիվ ծրագրի իրականացման ժամանակահատվածում, ապա իրավահաջորդ փաստաթուղթը կօգտագործվի աջակցությունն ուղղորդելու համար: Ծրագիրը նախատեսված է նաև հայ-թուրքական հարաբերությունների նորմալացմանն աջակցելու համար, որի արդյունքում մինչև ծրագրման ժամանակահատվածի ավարտը կարող է բացվել հայ-թուրքական սահմանը, և սահմանն անցնելու գործողությունների հետ կապված նոր կարիքներ կարող են ի հայտ գալ: 2011-2013թթ.-ի Ազգային ինդիկատիվ ծրագրում հիմնական նոր առանձնահատկությունները առևտրի ոլորտի շեշտադրումն է և աղքատության նվազեցումից շեշտի փոխադրումը սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Այս ծրագիրը կառուցվում է 2007-2010 թթ.-ի ԱԻԾ-ի վրա առաջնայնության հետևյալ ոլորտներով. Ժողովրդավարական կառույցների հզորացում և լավ կառավարում, կարգավորիչ դաշտի բարեփոխում և վարչական կարողությունների զարգացում, աջակցություն աղքատության նվազեցմանը:

Ինչ վերաբերում է տեխնիկական և ֆինանսական համագործակցությանը, TACIS-ի և ԵՀԳԳ ներքո ընթացող ծրագրերը շարունակվում են ԳՀՀ և ԵՀՔ Գործողությունների ծրագրի հիմնական ոլորտներում առաջընթացին աջակցելու համար: Մինչ օրս ԵՀԳԳ ոչ մի ծրագիր չի ավարտվել: Մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխման բյուջետավորման՝ 2007 թ.-ի Ամենամյա գործողությունների ծրագիրն ընթանում է 2008 թ.-ից և վերջնական հաստատման առաքելությունը պետք է կատարվի 2010 թ.-ի սկզբին: Մեկ այլ ՄԿՈ ԵՀԳԳ ծրագիր համաձայնեցվել է 2009 թ.-

[1] Արևելյան գործընկերության ներքո վարչական կարողությունները զարգացնելու նոր առանցքային գործիքը Համապարփակ ինստիտուցիոնալ զարգացման ծրագիրն է, որը մանրամասն նկարագրված է հինգերորդ գլխում:

ին: 2011-2013 թթ.-ի ընթացքում կառավարությունը պետք է կարողանա առաջ տանել ՄԿՈ բարեփոխումը առանց ԵՄ հետագա բյուջետավորման: Թվինինգի մի շարք ծրագրեր իրականացման փուլում են կամ ԵՀԳԳ ներքո վերջնական պատրաստության փուլում:

Ընդհանուր առմամբ Հայաստանը բարեհաջող կերպով է ընդունում ԵՄ աջակցությունը և ԵՄ ֆինանսավորման խելամիտ սպառում ցուցաբերում: Քաղված նախնական դասն այն է, որ ոլորտային բյուջետավորումը կարծես թե հարմար գործիք է Հայաստանին օգնելու համար՝ զուգադրված կարողության զարգացման գործիքներով: Այս Ինդիկատիվ ծրագրի նախագծում Աուդիտորների դատարանի նախնական բացահայտումների մասին զեկույցում նշվում է Հարավային Կովկասում ԵՀԳԳ իրականացման մասին, ներառյալ ԵՀՔ Գործողությունների ծրագրի և ծրագրային փաստաթղթերի միջև ավելի մեծ համապատասխանության ապահովման և գործընկեր երկրի հետ ընդլայնված երկխոսության անհրաժեշտությունը:

Հայաստանը նաև Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության անդամ է, սա տարածաշրջանային համագործակցության նախաձեռնություն է, որում ընդգրկված են ԵՀՔ հինգ արևելյան երկրներ, ինչպես նաև Ռուսաստանն ու Թուրքիան: ՍԾՏՀԿ-ն սևծովյան ավազանի երկրներն ընդգրկող նախաձեռնություն է, որը նպատակ ունի լուծելու տարածաշրջանային ջանքեր պահանջող խնդիրներ: ՍԾՏՀԿ գործադրումը այլ բաներին զուգահեռ ներառում է գործընկերությունների հիմնում, ինչպես օրինակ շրջակա միջավայրին վերաբերող գործընկերությունը, որը կմեկնարկի շուտով: Այլ ոլորտներն ու համագործակից սխեմաները ներկայումս ևս հետազոտվում են:

2011-13 թթ.-ի ԱԻԾ-ում նկարագրված գործողություններն ու նախաձեռնությունները կլրացվեն և կամրապնդվեն 2011-13 թթ.-ի Տարածաշրջանային և միջտարածաշրջանային ծրագրերով: Հայաստանն իրավունք ունի անդամագրվելու նաև Սևծովյան սահմանային համագործակցության ծրագրին, հետևաբար կարող է լրացուցիչ ֆինանսավորում ստանալ 2011-2013 թթ.-ին: ԵՄ համապատասխան գործակալությունների և ՀՀ շահագրգիռ պետական մարմինների ու իշխանությունների միջև ընդլայնված ոլորտային համագործակցության համար ռեսուրսները կապահովվեն ինչպես հարկն է ԵՀԳԳ 2011-2013 թթ.-ի Միջտարածաշրջանային ծրագրի ներքո: Հայաստանը շարունակելու է օգտվել նաև այնպիսի թեմատիկ ծրագրերից, ինչպիսիք են Եվրոպական գործիքը ժողովրդավարության և մարդու իրավունքների համար, Ոչ պետական դերակատարները և իրավական իշխանությունները զարգացման ծրագրում և Գործիքը միջուկային անվտանգության համագործակցության համար:

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ. Ինդիկատիվ ծրագիր 2011-2013 թթ. համար

2. 2011-13թթ. հիմնական առաջնայնությունները և նպատակները

Սույն Ազգային ինդիկատիվ ծրագրի ներքո Հայաստանին տրամադրվող աջակցությունը կկենտրոնանա երեք հիմնական առաջնայնությունների վրա: Կախված Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի հետագա զարգացումից՝ Եվրահանձնաժողովը պատրաստ կլինի հատուկ աջակցություն տրամադրել հակամարտության կարգավորման գործընթացի բոլոր ասպեկտներով՝ կարգավորման ամրապնդման ու քաղաքացիական հասարակության համապատասխան դերակատարների հզորացման միջոցով: Եվրահանձնաժողովը պատրաստ է նաև հատուկ աջակցություն տրամադրել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ:

Առաջնային ոլորտ 1. ժողովրդավարական կառույցներ և արդյունավետ կառավարում

Ենթաառաջնայնություն 1.1 Ժողովրդավարական ինստիտուտներ, օրենքի գերակայություն և դատական համակարգի բարեփոխումներ

Ենթաառաջնայնություն 1.2 Հանրային կառավարման բարեփոխումներ, ներառյալ՝ տեղական ինքնակառավարում և էլեկտրոնային կառավարում, հանրային ֆինանսների կառավարում ու կոռուպցիայի դեմ պայքար

Ենթաառաջնայնություն 1.3 Մարդու իրավունքներ և հիմնարար ազատություններ, քաղաքացիական հասարակության զարգացում

Առաջնային ոլորտ 2. Առևտուր և ներդրումներ, կարգավորիչ դաշտի համապատասխանեցում և բարեփոխումներ

Ենթաառաջնայնություն 2.1 Առևտրի ու ներդրումների խթանում, մասնավորապես՝ շուկայի զարգացման ու կարգավորիչ դաշտի բարեփոխումների միջոցով, ներառյալ՝ գործարար միջավայրի, հարկային ու մաքսային ոլորտներում, ինչպես նաև աջակցություն ՀՀ-ԵՄ ԽՀԱԱՀ նախապատրաստական աշխատանքներին

Ենթաառաջնայնություն 2.2 Ոլորտային օրենսդրական դաշտերի բարեփոխումներ և վարչական կարողությունների հզորացում

Ենթաառաջնայնություն 2.3 Սահմանների համապարփակ կառավարում և միգրացիա

Առաջնային ոլորտ 3. Սոցիալ-տնտեսական բարեփոխումներ և կայուն զարգացում

Ենթաառաջնայնություն 3.1 Տարածքային և գյուղական համայնքների զարգացում

Ենթաառաջնայնություն 3.2 Աջակցություն տրանսպորտի, էներգետիկայի, բնապահպանության, տեղեկատվության և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտներում ենթակառուցվածքների զարգացմանը

Ենթաառաջնայնություն 3.3 Մարդկային զարգացում, ներառյալ՝ կրթություն և գիտություն, սոցիալական ծառայություններ

Արևելյան գործընկերության քաղաքականության և առկա ու ապագայում հնարավոր պայմանագրային հարաբերությունների վրա հիմնված ԵՄ և գործընկեր պետության միջև երկարատև համագործակցությունը պահանջում է, որ ԵՀԳԳ ԱԻԾ-ը ընդգրկի ոլորտների համեմատաբար լայն շրջանակ: ԱԻԾ առաջնային ոլորտների բարեփոխումները պետք է իրականացվեն 2011-2013 թթ.-ի ծրագրային ժամանակահատվածում: Սակայն, այս ծրագրի ինդիկատիվ բնույթը որոշակի ճկունություն է ապահովում ենթաառաջնայնությունների իրականացման առնչությամբ: Ամենամյա գործողությունների ծրագրի նույնականացման գործընթացը հնարավորություն է տալիս գնահատելու ենթաառաջնայնությանն անդրադառնալու հարմար և ժամանակին լինելը, և առաջարկվող միջոցները ԵՄ քաղաքականություններին և ոլորտների զարգացումներին համապատասխանեցնելու: Այս առումով, անհրաժեշտ ճկունություն ապահովելու համար, սպասվող արդյունքներն ու դրա հետ կապված ցուցանիշները ինդիկատիվ են և պետք է համապատասխան լինեն Ամենամյա գործողությունների ծրագրի հատուկ դիզայնին: Այս գործընթացում պետք է հոգ տանել առաջնային կարևորության ենթաառաջնայնությունների իրականացման ապահովման մասին ԵՄ հետ հարաբերությունները խորացնելու համար Արևելյան գործընկերության և բարեփոխումների սատարման շարունակման համատեքստում: Նույնականացման մեջ պետք է հաշվի առնել ԵՀՔ Գործողությունների ծրագրի իրականացման առնչությամբ ԵՀՔ Առաջընթացի մասին զեկույցների տեղեկատվությունն ու ԳՀՀ շրջանակներում հիմնադրված ենթակոմիտեների աշխատանքը:

Ինդիկատիվ բյուջե

Այս Ազգային ծրագրի Ինդիկատիվ բյուջեն 157.3 մլն եվրո է երեք տարվա համար: է Արևելյան գործընկերության ներքո Ինստիտուցիոնալ զարգացման համապարփակ ծրագրի հատկացման համար նախատեսված կլինի առնվազն 32 մլն եվրո, որով Գործակցության համաձայնագրերի համար հիմքեր կնախապատրաստվեն, ներառյալ ԽՀԱԱՀ կնքման նպատակը: Առնվազն 7 մլն եվրո նախատեսվում է հատկացնել Արևելյան գործընկերության շրջանակներում Ներդաշնակեցման քաղաքականությանը:

Եթե Պետական կառավարման մարմինների զարգացման համապարփակ ծրագրի (ՊԿՄԶՀԾ) շուրջ համաձայնություն ձեռք չբերվի կամ ծրագրի իրականացումը հետաձգվի, ապա նախատեսված ֆինանսավորումը ամբողջովին կամ մասամբ կհատկացվի այլ ծրագրերի իրականացմանը:

Ազգային ինդիկատիվ ծրագրով յուրաքանչյուր առաջնայնության համար նախատեսված են հետևյալ ինդիկատիվ հատկացումները.

<u>**Առաջնային ոլորտ 1.**</u> Ժողովրդավարական կառույցներ և լավ կառավարում	30-35 %	47-55 մլն եվրո
<u>**Առաջնային ոլորտ 2.**</u> Առևտուր և ներդրումներ, կարգավորիչ դաշտի համապատասխանեցում և բարեփոխում	20-25 %	31-39 մլն եվրո
<u>**Առաջնային ոլորտ 3.**</u> Սոցիալ-տնտեսական բարեփոխում և կայուն զարգացում	40-45 %	63-71 մլն եվրո
Ընդամենը	100 %	157 մլն եվրո

4. ԱԻԾ 2011-2013 ԹԹ.-Ի ԱՌԱՋՆԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

4.1. Առաջնային ոլորտ մեկ. Ժողովրդավարական կառույցներ և լավ կառավարում (30-35 %)

Ռազմավարական համատեքստ/հիմնավորում

Ժողովրդավարական կառույցների հզորացումը, օրենքի գերակայությունը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգանքը ԵՄ-Հայաստան

հարաբերությունների հիմնարար սկզբունքներն են, որոնք անմիջապես կապված են ԵՀՔ Գործողությունների ծրագրի առաջնային 1 և 2 ոլորտների և 4.1. ու 4.5. գլուխների հետ: 2008 թ.-ի նախագահական ընտրություններին հաջորդած քաղաքական ճգնաժամն ընդգծում է ժողովրդավարեցման գործընթացի ամրացումն և Հայաստանի քաղաքական համակարգում ու կառավարման մեջ եվրոպական արժեքների որդեգրումը:

Ժողովրդավարության սկզբունքների ու արժեքների, օրենքի գերակայության և մարդու իրավունքների հարգանքի ուղղությամբ պատշաճ առաջընթացը Արևելյան գործընկերության շրջանակներում բարելավվող պայմանագրային հարաբերությունների հիմնական նախապայմաններն են: Օրենքի գերակայության բարելավումը ու լավ կառավարումը, կոռուպցիայի նվազեցումը և պետական կառույցների հզորացումը կարևոր են սոցիալ-տնտեսական զարգացման համար, այդ թվում ներդրումային իրադրությունը Հայաստանում: Եվ, վերջապես ժողովրդավարեցման ու հիմնարար ազատությունների ոլորտում առաջընթացը կարող է նպաստել Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման և խաղաղության ամրապնդման համար ավելի բարենպաստ պայմանների ստեղծմանը:

Պետական ֆինանսական կառավարման բարելավումը կարևոր տարր է պետական վարչարարության ընդլայնման հարցում, որը կավելացնի թափանցիկությունն ու պետական պատասխանատվությունը բոլոր մակարդակների կառավարական կառույցներում և կապահովի կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը: Առաջընթացը պետական ֆինանսական կառավարաման ոլորտում ևս բյուջետավորման նախապայմաններից է: ԵՄ-ը սատարել է Համաշխարհային բանկի կողմից PEFA գնահատմանը և ֆինանսավորել պետական գնումների Սիգմա գնահատումը: 2011-2013 թթ.-ին ԵՄ-ը կշարունակի անդրադառնալ այս ոլորտին:

Ժողովրդավարության հզորացումը պետք է ուղեկցվի քաղաքացիների իրավունքների և քաղաքացիների մասնակցության հետագա խթանմամբ պետական որոշումներ կայացնելու և բոլոր մակարդակների պետական կառույցներում ավելի շատ պետական վերահսկողություն սահմանելու հարցում: ԵՄ աջակցությունը պահանջվում է նաև խոսքի ազատության ու լրատվամիջոցների ազատության հետագա խթանման ու ապահովման, ինչպես նաև ընտրական գործընթացի բարելավման համար:

Ենթաառաջնայնություն 1.1. Ժողովրդավարական կառույցներ, օրենքի գերակայություն և դատական համակարգի բարեփոխում

1. Երկարաժամկետ ազդեցություն

Ակնկալվող երկարատև ազդեցությունը օրենքի գերակայությամբ և ժողովրդավարության ամրապնդմամբ բնութագրվող հասարակությանը նպաստելը կլինի:

2. Հատուկ նպատակներ

Նպաստել ավելի անկախ, թափանցիկ և արդյունավետ դատական համակարգի և ավելի հզոր ժողովրդավարական կառույցների զարգացմանը:

3. Ակնկալվող արդյունքներ

- Անկողմնակալության ավելացում և դատավորների ու դատախազների ինտեգրում միջազգային չափանիշներին:
- Արդարադատության վարչարարության արդյունավետության ընդլայնում միջազգային չափանիշներին համաձայն:
- Դատավորների, դատախազների ու ոստիկանության կարողությունների ընդլայնում կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի համար:
- Արդարադատության հասանելիություն հանրությանը, ներառյալ խոցելի խմբերն ու տնտեսվարողները:
- Ժողովրդավարական կառույցների կարողությունների հզորացում:
- Ընտրական գործընթացի և վարչարարության որակի բարելավում միջազգային չափանիշներին համաձայն:

4. Հաջողության ցուցանիշներ[2]

- Դատական և իրավապահ մարմինների հանդեպ հանրության վստահության ավելացում:
- Իրավապահ համակարգի կողմից քաղաքական դրդապատճառներ ունեցող հանցանքների և չարաշահումների դեպքերի հետաքննության ավելացում:
- Սպասման մեջ գտնվող դատական գործերի թվի կրճատում:
- Իրավապահ համակարգի կողմից կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարի բարեհաջող ավարտված դեպքերի քանակի ավելացում:
- Արդարադատության հասանելիություն իրավական աջակցության ընդլայնման միջոցով:
- Մարդու իրավունքների պաշտպանի կառույցի և խորհրդարանի կարողությունների հզորացում:

[2] Այս ԱԻԾ-ում բերված բոլոր ընդհանուր ցուցանիշները հետագայում պետք է որոշակիացվեն Ամենամյա գործողությունների ծրագրերում:

- Ընտրությունների անցկացման հետագա բարելավում:

Ենթաառաջնայնություն 1.2. Հանրային կառավարման բարեփոխումներ, ներառյալ՝ տեղական ինքնակառավարում և էլեկտրոնային կառավարում, հանրային ֆինանսների կառավարում ու կոռուպցիայի դեմ պայքար

1. Երկարաժամկետ ազդեցություն

Ակնկալվող երկարատև ազդեցությունը ժամանակակից պետության զարգացմանը նպաստելը պետք է լինի, որում վարչարարության կողմնորոշումը քաղաքացիների կարիքների բավարարմանն պետք է ուղղված լինի և որն ի զորու պետք է լինի կառավարելու պետական ֆինանսները հաշվելի, թափանցիկ և արդյունավետ ձևով:

2. Հատուկ նպատակներ

Հզորացնել տեղական ինքնակառավարման կառույցները և բարելավել հանրային ծառայությունների որակը, ինչպես նաև վարչական մարմինների կարողությունները պետական ֆինանսական կառավարումը բարելավելու և կոռուպցիան նվազեցնելու համար:

3. Ակնկալվող արդյունքներ

- Պետական վարչարարության բարեփոխման գործադրմամբ ծրագրվում է բարեփոխել տեղական ինքնակառավարման մարմինները Տեղական ինքնակառավարման մարմինների եվրոպական խարտիային համապատասխան:
- Հակակոռուպցիոն ռազմավարության արդյունավետ գործադրում և կոռուպցիայի դեմ պայքարի վարչական կարողությունների հզորացում:
- Էլեկտրոնային կառավարման գործիքների ավելի լայն կիրառություն պետական վարչարարության արդյունավետությունն ընդլայնելու համար:
- Թափանցիկ և լավ գործող պետական ֆինանսական կառավարման զարգացում, ներառյալ բարելավված ինստիտուցիոնալ կարողություններ պետական ներքին վերահսկողության և արտաքին աուդիտի համար:

4. Հաջողության ցուցանիշներ

- Տեղական ինքնակառավարման կառույցների հզորացում:
- Պատշաճ ռազմավարական քաղաքականությունների ստեղծում և գործադրում և լավ փորձ պետական վարչարարության բարեփոխման ոլորտում:
- Կոռուպցիայի մակարդակի իջեցում:

- Պետական վարչարարության արդյունավետության ավելացում և հանրային տեղեկատվության ու ծառայությունների մատչելիության բարելավում:
- Պետական ֆինանսական կառավարման համակարգ, այդ թվում ինստիտուցիոնալ կարողությունների բարելավում պետական ներքին վերահսկողության ու արտաքին աուդիտի համար:

Ենթաառաջնայնություն 1.3. Մարդու իրավունքներ և հիմնարար ազատություններ, քաղաքացիական հասարակության զարգացում

1. Երկարաժամկետ ազդեցություն

Ակնկալվող երկարատև ազդեցությունը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հանդեպ հարգանքին նպաստելն է, քաղաքացիական հասարակության՝ հանրային և սոցիալական կյանքին ակտիվ մասնակցությունը, ժողովրդավարական ու կայուն զարգացումը Հայաստանում:

2. Հատուկ նպատակներ

- Հարգանք մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հանդեպ միջազգային և եվրոպական չափանիշներին համապատասխան, քաղաքացիական հասարակության հետ կանոնավոր խորհրդակցություն որոշումներ կայացնելիս:
- Լրատվամիջոցների ազատության հանդեպ հարգանքի ապահովում:

3. Ակնկալվող արդյունքներ

- հարգանքի բարելավում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հանդեպ դատական մարմինների, դատախազների, իրավապահ մարմինների և պատժիչ հաստատությունների աշխատակազմերի կողմից
- Քաղաքական, սոցիալական ու տնտեսական հարցերով բանավեճերի ժամանակ Քաղաքացիական հասարակության՝ իր ձայնն արտահայտելու կարողությունների հզորացում
- Օրենսդրության նախագծման առնչությամբ Քաղաքացիական հասարակության հետ սիստեմատիկ խորհրդակցությունների ընդլայնում
- իրավական և վարչական շրջանակի բարելավում և ամրացում լրատվամիջոցների, այդ թվում լրագրողների իրավունքների, հանդեպ հարգանք ապահովելու համար:

4. Հաջողության ցուցանիշներ

- Մարդու իրավունքների սկզբունքները արդարադատության ոլորտ մտցնող նորմերի ու կանոնակարգերի ամրապնդում, ներառյալ դրանց ընթացաստուգումն ու գնահատումը:
- Քաղաքացիական հասարակության հետ խորհրդակցությունների պաշտոնական ընթացակարգի ներկայացում և խորհրդակցությունների թվի ավելացում:
- Լրատվամիջոցների բազմակարծության ընդլայնում:

4.2. Առաջնային ոլորտ 2. Առևտուր և ներդրումներ, կարգավորիչ դաշտի համապատասխանեցում և բարեփոխումներ (20-25 %)

Ռազմավարական համատեքստ/արդարացում

Առաջնայնության այս ոլորտը ուղղակիորեն վերաբերում է ԵՄ-Հայաստան ԵՀՔ Գործողությունների ծրագրի 4 և 5 Առաջնային ոլորտներին և 4.4, 4.5 ու 4.6 գլուխներին՝ կապված արևտրի ու ներդրումների դյուրացման և սահմանի կառավարման ու միգրացիայի հետ:

ԵՄ-Հայաստան հարաբերություններում առևտուրն ու ներդրումները խթանելը շարունակում է խոշոր առաջնայնություն դիտվել: Աջակցումը առևտրին ու ներդրումներին, կարգավորիչ դաշտի համապատասխանեցումը և բարեփոխումների անհրաժեշտությունը 2011-2013 թթ.-ի ծրագրման ժամանակահատվածում հատուկ ուշադրության է արժանի՝ հաշվի առնելով Գործակցության համաձայնագրի համար բանակցություններ մեկնարկելու հեռանկարը, այդ թվում Հայաստաանի և ԵՄ միջև ԽՀԱԱՀ կնքելու նպատակը, եթե բոլոր անհրաժեշտ պայմանները կատարվեն: Ապագա ԽՀԱԱՀ-ն կպարունակի իրավական տեսակետից կանոնակարգված պարտավորություններ առևտրի և ներդրումների ոլորտներում: Դրանց բանակցումն ու գործադրումը կպահանջի ԵՄ աջակցությունը: Մինչ առևտուրը նոր նպատակային ոլորտ կլինի Հայաստանին ԵՀԳԳ աջակցության շրջանակներում, ԵՄ-ը պատրաստ է աջակցելու այս գործընթացին այս ոլորտում ունեցած իր մեծ համաշխարհային փորձի շնորհիվ:

Հայաստանի առևտրաներդրումային օրենսդրության և ընթացակարգերի համաձայնեցումը ԵՄ ներքին շուկային և միջազգային նորմերին, կբարելավի առևտրաներդրումային հնարավորությունները Հայաստանի համար, ինչպես նաև երկրի երկրի-ներդրումային իրադրությունը:

Ապրանքների և մարդկանց շարժը հեշտացնելու և տարածաշրջանում կայունությանն ու անվտանգությանը նպաստելու համար ԵՄ աջակցությունը կկիրառվի ինչպես և

նախատեսվում էր Արևելյան գործընկերության ներքո: Եվրահանձնաժողովի ընդլայնված աջակցության կարիքը կլինի, եթե Թուրքիայի հետ սահմանի բացման հեռանկարն իրականություն դառնա մինչև ծրագրման ժամանակահատվածի վերջը: Նման աջակցությունը պետք է համակարգվի տարածաշրջանային ծրագրերով, ներառյալ Հարավկովկասյան ինտեգրված սահմանի կառավարման ծրագիրը և Ինտեգրված սահմանի կառավարման մասին Արևելյան գործընկերության կարևորագույն նախաձեռնությունը:

Ենթաառաջնայնություն 2.1. Առևտրի ու ներդրումների խթանում, մասնավորապես՝ շուկայի զարգացման ու կարգավորիչ դաշտի բարեփոխումների միջոցով, ներառյալ՝ գործարար միջավայրի, հարկային ու մաքսային ոլորտներում, ինչպես նաև աջակցություն ՀՀ-ԵՄ ԽՀԱԱՀ[3] նախապատրաստական աշխատանքներին

1. Երկարաժամկետ ազդեցություն

Ակնկալվող երկարատև ազդեցությունը տնտեսական զարգացման ու բարգավաճման ընդլայնումն է, ավելի լավ կանոնակարգված շուկաները երկրում և առևտրաներդրումային հարաբերությունների ընդլայնումը Հայաստանի և ԵՄ միջև:

2. Հատուկ նպատակներ

Առևտրի ու ներդրումների հեշտացումը, այդ թվում առկա սահմանների աստիճանական հեռացմամբ, աջակցությունը ՀՀ-ԵՄ ԽՀԱԱՀ նախապատրաստական աշխատանքներին, շուկայի կանոնակարգիչ բարեփոխման գործադրումը:

3. Ակնկալվող արդյունքներ

- Առևտուրն ու ներդրումները խթանող բարեփոխումների, այդ թվում գոյություն ունեցող սահմանների կրճատում, ներկայացում և գործադրում:
- Գործարար միջավայրի բարելավում
- Հայաստանի կողմից լիակատար պատրաստվածություն ԵՄ հետ ապագա ԽՀԱԱՀ-ն բանակցելու և գործադրելու համար, մասնավորապես ինստիտուցիոնալ և վարչական կարողությունների հզորացման շեշտադրում:
- Շուկայի կանոնակարգիչ բարեփոխումներ ԵՄ օրենսդրության ու ընթացակարգերի և միջազգային օրենքների ու չափանիշների հանդեպ աստիճանական մոտարկման ու իրականացման միջոցով ինստիտուցիոնալ ու վարչական կարողությունների զարգացման ուղեկցությամբ (ներառյալ

[3] Սա չի բացառում հավանականությունը, որ բանակցությունները ընթացքի մեջ են:

լաբորատորիաների, վերահսկիչ մարմինների և տեղեկատվական համակարգերի պատշաճ բարելավում) մասնավորապես հետևյալ ոլորտներում.

- Տեխնիկական կանոնակարգում, ստանդարտացում, հավատարմագրում, վկայագրում, չափագիտություն, գնահատման համապատասխանություն, շուկայի վերահսկողություն
- Սանիտարական և բուսասանիտարական հարցեր և կենդանիների առողջապահություն
- Հարկային և մաքսային հարցեր առևտուրը հեշտացնելու և կեղծիքի դեմ պայքարելու տեսակետից
- Մտավոր սեփականության իրավունք,մասնավորապես շեշտը դնելով հեղինակային իրավունքների խախտումների և կեղծիքների դեմ պայքարի օրենսդրության իրականացման ու ամրապնդման վրա:

4. Հաջողության ցուցանիշներ

- Առևտրի և ներդրումների բարեփոխման ռազմավարությունների պատրաստում և իրականացում:
- Բազմազան և մեծ քանակությամբ առևտրի իրականացում և Ուղիղ արտասահմանյան առևտրի հոսք (ինչպես ցույց է տալիս համապատասխան վիճակագրությունը),
- ԵՄ հետ ապագա ԽՀԱԱՀ բանակցությունների և իրականացման կարողությունների ընդլայնում, ինստիտուցիոնալ և վարչական կարողությունների հզորացման հատուկ շեշտադրմամբ (ինչպես ցույց է տալիս ԽՀԱԱՀ նախապատրաստական գործընթացի պահանջների իրականացման առաջընթացը)
- ԵՄ ու միջազգային օրենսդրության ու ընթացակարգերի մոտարկման աստիճանի ընդլայնում և ինստիտուտցիոնալ ու վարչական կարողությունների հզորացում առևտրի և ներդրումների բնագավառներում, մասնավորապես ա) տեխնիկական կանոնակարգման, ստանդարտացման, հավատարմագրման, վկայագրման, չափագիտության, գնահատման համապատասխանության, շուկայի վերահսկողության, բ)սանիտարական և բուսասանիտարական հարցերի և կենդանիների առողջապահության, գ) հարկային և մաքսային հարցերում առևտուրը հեշտացնելու և կեղծիքի դեմ պայքարելու տեսակետից, դ) մտավոր սեփականության իրավունքի, մասնավորապես շեշտը դնելով հեղինակային իրավունքների խախտումների և կեղծիքների դեմ պայքարի օրենսդրության իրականացման ու ամրապնդման վրա:

Ենթաառաջնայնություն 2.2. Ոլորտային օրենսդրական դաշտերի բարեփոխումներ և վարչական կարողությունների հզորացում

1. Երկարատև ազդեցություն

Ակնկալվող երկարատև ազդեցությունը Հայաստանի տնտեսության մրցունակության բարելավումն է ԵՄ նորմերի ու չափանիշների հետ կանոնակարգային համապատասխանության բարելավման արդյունքում, այդ թվում վարչական ու ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում տրանսպորտի, էներգետիկայի և բնապահպանական ոլորտներում:

2. Հատուկ նպատակներ

Օրենսդրության ու ընթացակարգերի համաձայնեցում ԵՄ նորմերին ու չափանիշներին, վարչական ու ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում տրանսպորտի (ճանապարհային, երկաթուղային, ավիացիոն), էներգետիկայի և բնապահպանական ոլորտներում և անդրադարձ իրադրության փոփոխությանը համապատասխան ոլորտներում:

3. Ակնկալվող արդյունքներ

- Ոլորտին հատուկ կանոնակարգիչ բարեփոխումների և հաստատությունների զարգացման գործադրում տրանսպորտի, էներգետիկայի և բնապահպանության ոլորտներում:
- Միջազգային չափանիշների լիակատար գործադրում ավիացիայի ոլորտում և համապատասխանեցում եվրոպական չափանիշներին, մասնավորապես ապահովության ու անվտանգության տեսակետից:
- Իրադրության փոփոխության մեղմացում և ազդեցությունների նվազեցում տրանսպորտի և էներգետիկայի ոլորտներում ձեռնարկված համապատասխան միջոցների շնորհիվ (ներառյալ էներգիայի արդյունավետ օգտագործումն ու էներգիայի նորացվող աղբյուրները):

4. Հաջողության ցուցանիշներ

- Կանոնակարգիչ համապատասխանության բարձր մակարդակ տրանսպորտի, էներգետիկայի և բնապահպանության ոլորտներում
- Հայաստանի հետագա ինտեգրում համաեվրոպական տրանսպորտի կառույցներին, ներառյալ Ընդհանուր ավիացիոն դաշտին
- Օդի աղտոտման ցածր և էներգիայի արդյունավետ գործածման բարձր աստիճաններ:

Ենթաառաջնայնություն 2.3 Սահմանների համապարփակ կառավարում և միգրացիա

1. Երկարաժամկետ ազդեցություն

Ակնկալվող երկարատև ազդեցությունը սահմանի կառավարման բարելավման արդյունքում սահմանը հատելիս ապրանքների և մարդկանց իրավական շարժի հեշտացումն է:

2. Հատուկ նպատակներ

Սահմանի կառավարման բարելավում սահմանի վերահսկողության կատարելագործված ընթացակարգերի և կառավարման համակարգերի միջոցով և սահմանային ենթակառուցվածքի բարելավում համապատասխան վայրերում; միգրացիայի և ապաստարանն տալու հարցերի հետ կապված օրենսդրության ու կարողությունների բարելավում:

3. Ակնկալվող արդյունքներ

- Մարդկանց և ապրանքի իրավական շարժը հեշտացնող քաղաքականության ու իրավական շրջանակի հիմնում
- Սահմանի վերհսկողության ընթացակարգերի և կառավարման համակարգերի համաձայնեցում ԵՄ օրենսդրությանն ու միջազգային լավագույն փորձին
- Պատշաճ սահմանային ենթակառուցվածքով, համապատասխան տեղեկատվական համակարգերով, վերահսկողության մեխանիզմներով սահմանի հատման ընթացակարգերի բարելավում
- Մարդկային առևտրի, մասնավորապես կանանց և երեխաների, ինչպես նաև սահմանի մոտ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կարողության ընդլայնում
- Հայկական ազգային միգրացիոն քաղաքականության գործադրում Եվրոպական չափանիշներին զուգահեռ, այդ թվում միգրացիոն տվյալների կառավարում բարելավում և անօրինական միգրացիայի կասեցում:
- Ժամանակակից ապաստարանային համակարգերի հիմնում:

4. Հաջողության ցուցանիշներ

- Մաքսազերծման համար սահմանի մոտ սպասելու ժամանակի կրճատում:
- Սահմանի կառավարման հարցում և սահմանն անցնելու հետ կապված հանցագործությունների դեմ պայքարում ներգրավված ազգային բոլոր

ծառայությունների միջև տվյալների փոխանակման ու միջգործակալային համագործակցության ընդլայնում:

- Միգրացիոն և ապաստարանային հարցերով զբաղվելու ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում:
- Միգրացիան համապատասխան օրենսդրական շրջանակի զարգացում և գործադրում:

Առաջնային ոլորտ 3. Սոցիալ-տնտեսական բարեփոխումներ և կայուն զարգացում (40-45 %)

Ռազմավարական համատեքստ.

Սոցիալ-տնտեսական բարեփոխումներն ու կայուն զարգացումը ՀՀ կառավարության առջև կանգնած հիմնական մարտահրավերներից են և ուղղակիորեն կապված են ԵՄ-Հայաստան Գործողությունների Ծրագրի հետ, մասնավորապես Առաջնային ոլորտ 3-ի և 4.3 ու 4.7 գլուխների:

Սոցիալական և տնտեսական զարգացմանն աջակցելը Արևելյան գործընկերության առաջնայնություններից է, որտեղ շեշտը դրվում է տեղական կարիքները հոգալու վրա տեղական ենթակառուցվածքների, մարդկային ու ՓՄԲ զարգացման համար: Արևելյան գործընկերության շրջանակներում Հայաստանն օգուտ կքաղի երկրի շրջանների միջև տնտեսական ու սոցիալական անհավասարությանը և տնտեսական ու սոցիալական զարգացմանը նպաստելու միջոցով ներքին ներդաշնակության ավելացմանն ուղղված աջակցությունից: Այս աջակցությունը կարող է ԵՄ Ներդաշնակեցման քաղաքականության մոդելով պատրաստված շրջանների զարգացման ծրագրի ձևն ունենալ: Ծրագիրը պետք է մինչև 2012 թ.-ի կեսը համաձայնեցվի Եվրահանձնաժողովի և ՀՀ միջև: Նման ծրագիր հիմնելու հարցում Հայաստանին աջակցելու համար օգնությունը կտրամադրվի թվինինգ կամ տեխնիկական աջակցության տեսքով ծրագիրը կազմելու և իրականացման կառույցներ պատրաստելու համար: Նման միջամտությունը պետք է հիմնված լինի Հայաստանի իրական կարիքների վրա՝ հաշվի առնելով նրա տարածքային կազմավորումը:

Շրջանների և գյուղերի զարգացումը հատկապես կարևոր է գլոբալ տնտեսական ու ֆինանսական ճգնաժամի համատեքստում, որը սրում է շրջանների միջև առկա անհավասարությունները աշխատանքի տեղավորման, սոցիալական ու տնտեսական ռեսուրսների մատչելիության տեսակետից: Տղամարդկանց և կանանց միջև գործազրկության, ձեռներեցության հասանելիության տեսակետից անհավասարությունները հաշվի կառնվեն:

ԵՀ կարող է այս Ինդիկատիվ ծրագրի միջոցով աջակցություն ցուցաբերել ներդրումներին (ինչպես օրինակ նախագծերի նախապատրաստում Միջազգային ֆինանսական կառույցների մասնակցությամբ կամ ներդրումներով): Որպես կանոն նման աջակցությունը կարող է տեղի ունենալ ոլորտային բյուջետավորման ծրագրերի շրջանակներում հետևյալ ոլորտներում՝ էներգետիկայի, տրանսպորտի, բնապահպանության և էլեկտրոնային հաղորդակցությունների: Հետագա պայմանների համաձայն ներդրումները չեն հասնում ԱԻԾ ֆինանսավորման շրջանակին ու մասշտաբին, և դրանք նպաստում են ենթակառուցվածքների տեղական կարիքների բավարարմանը, ինչպես նշվում է Արևելյան գործընկերության ծանուցագրում:

Մարդկային զարգացումը, այդ թվում կրթական և բուհական համակարգերի բարելավումը ԵՄ չափանիշների ու փորձի համաձայն և սոցիալական ծառայությունների բարելավումը ոչ միայն կբարձրացնեն Հայաստանի մրցունակությունն ու սոցիալ-տնտեսական զարգացման ավելի լավ հեռանկարներ կապահովեն, այլև կնպաստեն ժողովրդավարական զարգացմանն ու սոցիալական կայունությանը երկրում, և գուցե դրական ազդեցություն ունենան նաև հակամարտությունների լուծման հարցում:

Ենթաառաջնայնություն 3.1 Տարածքային և գյուղական համայնքների զարգացում

1. Երկարաժամկետ ազդեցություն

Ակնկալվող երկարատև ազդեցությունը կայուն զարգացմանը, տարածքային անհավասարությունների նվազեցմանն ու սոցիալական ներդաշնակության ավելացմանը նպաստելն է:

2. Հատուկ նպատակներ

Նվազեցնել սոցիալական ու տնտեսական անհավասարությունները շրջանների միջև, խթանել գյուղատնտեսական բարեփոխումներն ու գյուղական ձեռներեցությունը:

3. Ակնկալվող արդյունքներ

- Շրջաններում ձեռներեցության ընդլայնում:
- Գործարար միջավայրի բարելավում, մասնավորապես ՓՄԲ զարգացում:
- Գյուղատնտեսության ոլորտում բարեփոխումների գործադրում արդյունավետությունն ու առևտուրը ավելացնելու համար:
- Շրջաններում աշխատանքի տեղավորման հնարավորությունների ավելացում:

4. Հաջողության ցուցանիշներ

- Շրջանների միջև տնտեսական անհավասարությունների նվազեցում:
- Շրջաններում գրանցված ՓՄԲ-ների թվի ավելացում:
- Արդյունավետության ավելացում գյուղատնտեսության ոլորտում:
- Գյուղական զարգացմանը բոլոր խմբերի, այդ թվում կանանց, մասնակցության ավելացում:

Ենթաառաջնայնություն 3.2. Աջակցություն տրանսպորտի, էներգետիկայի, բնապահպանության, տեղեկատվության և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտներում ենթակառուցվածքների զարգացմանը

1. Երկարաժամկետ ազդեցություն

Ակնկալվում է երկարաժամկետ ազդեցություն Հայաստանի տնտեսության մրցունակության բարձրացման և կայուն զարգացման առումով, մասնավորապես էներգետիկայի, տրանսպորտի, բնապահպանության, տեղեկատվության և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտներում բարելավված ենթակառուցվածքների միջոցով:

2. Հատուկ նպատակներ

Բավարարել ենթակառուցվածքների տեղական կարիքները և անհրաժեշտության դեպքում օժանդակել ենթակառուցվածքների վերաբերյալ կոնկրետ նախագծերի պատրաստմանը էներգետիկայի, տրանսպորտի, բնապահպանության, տեղեկատվության և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտներում:

3. Ակնկալվող արդյունքները

- արդյունավետ նախապատրաստական աշխատանքներ ենթակառուցվածքների վերաբերյալ կոնկրետ նախագծերում ներդրումների համար՝ համաձայն ԵՄ առաջնայնությունների,
- բարելավված ենթակառուցվածքներ տրանսպորտի և բնապահպանության ոլորտում,
- էներգետիկայի ոլորտի արդյունավետության բարձրացում էներգետիկ ենթակառուցվածքների վերակառուցման միջոցով,
- տեղեկատվության և հեռահաղորդակցության միջոցների հասանելիություն, հատկապես գյուղական բնակավայրերում:

4. Հաջողության ցուցանիշները

- կոնկրետ ենթակառուցվածքների ծրագրերի նախապատրաստում և իրականացում
- էներգետիկայի արդյունավետության բարձրացում,
- տեղեկատվության և հեռահաղորդակցության միջոցների առավել հասանելիության և առավել լայն կիրառում:

Ենթաառաջնայնություն 3.3. Մարդկային զարգացում, ներառյալ կրթություն և գիտություն, սոցիալական ծառայություններ

1. Երկարաժամկետ ազդեցություն

Ակնկալվում է երկարաժամկետ ազդեցություն Հայաստանում սոցիալ-տնտեսական զարգացման և աղքատության կրճատման հնարավորությունների մեծացման առումով:

2. Հատուկ նպատակներ

Կրթության և ուսուցման համակարգերի արդիականացում սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստելու, Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ինտեգրումը հեշտացնելու և Եվրոպական գիտահետազոտական տարածքում ինտեգրվելու, ինչպես նաև սոցիալական ծառայությունները բարելավելու նպատակով:

3. Ակնկալվող արդյունքները

- կրթության և ուսուցման համակարգերի որակի և կարողությունների զարգացում և համապատասխանեցում եվրոպական ստանդարտներին և պրակտիկային, ներառյալ համապատասխան փոխանակման ծրագրերին ընդլայնված մասնակցություն,
- բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումների նախաձեռնում՝ համաձայն Բոլոնիայի գործընթացի սկզբունքներին,
- գիտահետազոտական կառույցների կարողությունների (մարդկային և նյութական ռեսուրսներ) հզորացում՝ շեշտը դնելով գիտական գերազանցության և եվրոպական գիտատեխնիկական հետազոտական ծրագրերում հայ հետազոտողների ավելի լայն մասնակցության վրա,
- մարզերում սոցիալական ծառայությունների բարելավում, հատկապես մանկական խնամքի և երեխաների պաշտպանության բնագավառում,

- հանրային առողջության բնագավառում միջազգային համաձայնագրերի իրականացման բարելավում, հատուկ ուշադրություն դարձնելով վարակիչ և ոչ վարակիչ հիվանդություններին,

4. Հաջողության ցուցանիշները

- բարձրագույն կրթության բարեփոխման հետագա իրականացում՝ համաձայն Բոլոնիայի սկզբունքների և ուղենիշների, որոնք սահմանված են Բոլոնիայի չափանիշներով, և ընդլայնված մասնակցություն Տեմպուս, Էրազմուս Մունդուս և այլ ԵՄ կրթական ծրագրերի,
- հետագա քայլեր ուղղված եվրոպական գիտահետազոտական տարածքում ներգրավմանը, որի ցուցանիշ է համարվում ԵՄ գիտահետազոտական շրջանակի ծրագրերով ընտրված դիմումների և առաջարկների թվի աճը, համալսարաններում գիտահետազոտական աշխատանքների և կարողությունների հզորացումը,
- մարզերում սոցիալական ծառայությունների՝ այդ թվում երեխաների խնամքի և հանրային առողջության բարելավում,

5. ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Ծրագրի համատեղ նպատակների իրականացման շուրջ գործակցությունը ծրագրի հիմքում ընկած ընդհանուր սկզբունքն է: Հայաստանյան գործընկերները պետք է հնարավոր առավելագույն չափով ընդգրկվեն ծրագրերի մշակման գործում: Համաձայն Փարիզի հռչակագրի և օգնության արդյունավետության վերաբերյալԱքրայի գործողությունների օրակարգի, նախընտրություն պետք է տրվի ծրագրից բխող մոտեցումներին, և օգնության ծրագրերի համար առաջին հերթին պետք է օգտագործվեն տեղական համակարգերը: Սույն Ինդիկատիվ ծրագրի առաջնայնություններն ուղղակիորեն բխում են ԵՀՔ ներքո ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի և Արևելյան գործընկերության առաջնայնություններից, այդպիսով ապահովելով համատեղ նպատակների և օժանդակության շուրջ համագործակցության միջև ամուր կապը: Շարունակականության արդյունքում կարելի է շեշտը դնել ԵՀ օժանդակության վրա և նպաստել Հայաստանում դոնորների միջև աշխատանքի հստակ բաժանմանը և արդյունավետության բարձրացմանը: Քանի որ բազմաթիվ փոքր և ինքնուրույն միջոցառումները կարող են հանգեցնել վարչական գերբեռնվածության և ընդհանուր առմամբ դանդաղեցնել ծրագրի իրականացումը, ապա գործողությունների տարեկան ծրագրերի բաղադրիչների թիվը պետք է սահմանափակ լինի:

Անհրաժեշտության դեպքում շահառուները, ներառյալ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ստանալու են խորհրդատվություն սույն ծրագրով նախատեսված միջոցառումների վերաբերյալ, և հավանաբար ընդգրկվելու են մոնիտորինգի գործընթացում: Բարեփոխումների գործում կապահովվի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դերակատարումը և ԱԻԾ-ում ընդգրկված ոլորտների հանրային հաշվետվության մեծացումը:

Ոլորտների բյուջետավորման ծրագրերը նպատակ ունեն զարգացնել քաղաքական երկխոսություն և բարեփոխման գործընթացում մեծացնել կառավարության դերակատարումը: Այս ծրագրերի մշակումը պետք է համահունչ լինի ԵՀՔ ներքո ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կամ հաջորդող փաստաթղթերի առաջնայնություններին, և նրանց իրականացումը պետք է կապված լինի ընթացող քաղաքական երկխոսության հետ: Ծրագրերի որոշումը պետք է հիմնվի Ոլորտի պատրաստության գնահատման վրա: Ոլորտի վերաբերյալ հստակ սահմանված ռազմավարության, կուռ մակրոտնտեսական կառուցվածքի, և առողջ պետական ֆինանսական կառավարման համակարգի առկայությունը ոլորտների բյուջետավորման գործողությունների անհրաժեշտ նախապայման է: Ընդհանուր բյուջետավորումը կքննարկվի, եթե ցույց տրվի, որ օգնության տրամադրման մեխանիզմը կարող է ապահովել ԱԻԾ-ի առաջնահերթությունների արդյունավետ իրականացումը:

Հայաստանում ոլորտային ծրագրերի աջակցության օգտագործման նախնական վերլուծությունը ցույց է տալիս, որ այս մեթոդը, համալրվելով կարողությունների զարգացման այլ գործիքներով, Հայաստանին օժանդակություն տրամադրելու նպատակահարմար գործիք է: Ընդհանուր առմամբ, ոլորտային ծրագրերի աջակցության, ինչպես նաև այլ նոր օժանդակության մեխանիզմների և ֆինանսավորման մեթոդների իրականացումը բավական հաջողությամբ մեկնարկել է Հայաստանում, այժմ ընթացքում է մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտի բյուջետավորման ծրագիրը: 2009թ. վերջին որոշվել է սկսել հաջորդ ոլորտային աջակցության ծրագիրը, որը վերաբերում է արդարադատության ոլորտին, և շարունակել մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտի աջակցության ծրագիրը: Հայաստանի կառավարությունը պատրաստակամ է իրականացնել ոլորտների աջակցության ծրագիրը: Կառավարությունը հանձն է առել բավարարել առաջադրված պայմանները, և ՄԿՈՒ ծրագիրն արդեն հասցրել է հզորացնել նախարարությունների համակարգումը: 2007-2010թթ. ԱԻԾ-ի իրականացման փորձը ցույց է տալիս ողջ գործընթացի ընթացքում Հայաստանի կառավարության հետ ամուր երկխոսության անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ, բյուջետավորման ծրագրերը բոլորովին վերջերս են մեկնարկել, և դժվար է հեռահար դասեր քաղել դրանց իրականացման վաղ փուլերից, ուստի ԱԻԾ-ի հետագա իրականացումը 2011-2013 թթ.

պետք է ենթարկվի հանգամանալից մոնիտորինգի՝ ԵՀԳԳ նպատակների իրականացման արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Ենթակառուցվածքների վերականգնումը և զարգացումը, որպես ԱԻԾ առաջնային ոլորտի ծրագրի մաս, պետք է մշակվի ԵՆԲ, ՎԶԵԲ, և այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ սերտ համագործակցության միջոցով: Եթե ֆինանսավորում հատկացվի Հարևանության ներդրումային գործիքի (NIF) կողմից, ապա նախապատվությունը կտրվի վերջինիս: Այս ծրագրի ներքո տրանսպորտի, էներգետիկայի և բնապահպանության ոլորտների ենթակառուցվածքների զարգացման աջակցություն կնախատեսվի այն դեպքում, եթե նախագծերը չգերազանցեն ՀՆԳ ֆինանսավորման շրջանակներն ու ծավալը և ուղղված լինեն ենթակառուցվածքների տեղական կարիքների բավարարմանը: Տոկոսադրույքների սուբսիդավորման հարցի քննարկման դեպքում դրա անհրաժեշտությունը գնահատվելու է կոնկրետ օրինակների հիման վրա՝ խուսափելով շուկայի զգալի աղավաղումներից:

Հայաստանը վերջերս ընտրվել է Վարչական և ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման (TWINNING) և Տեխնիկական աջակցության և տեղեկատվության փոխանակման (TAIEX) ծրագրերի համար: Հայկական կողմն այս գործիքներից օգտվելու մեծ հետաքրքրություն է ցուցաբերել: TAIEX-ն արդեն իսկ լայնորեն կիրառվում է, և նախնական գնահատման համաձայն, այն արդյունավետ է եղել Հայաստանում բարեփոխումների իրականացման առումով: TWINNING ծրագրերը մեկնարկել են 2009թ. վերջին, և ծրագրի մշակման ժամանակահատվածում դիմումների զգալի հոսք է սպասվում:

Հնարավոր է, որ Հայաստանը աջակցություն ստանա ԵՄ ծրագրերի մասնակցության համաֆինանսավորման համար, եթե տվյալ ծրագիրը բաց է մասնակցության համար:[4] ԵՄ գործակալությունների և Հայաստանի շահագրգիռ պետական մարմինների և իշխանությունների միջև ոլորտային համագործակցության հզորացման ռեսուրսները կտրամադրվեն՝ 2011-2013թթ. ԵՀԳԳ միջտարածաշրջանային ծրագրով:

ԱԻԾ-ում նշված առաջնայնությունները կհիմնավորվեն գիտատեխնիկական հետազոտությունների արդյունքներով: Այս առումով խրախուսվում է, որ Հայաստանը ավելացնի գիտատեխնիկական հետազոտությունների ոլորտի ներդրումները և կարողությունները՝ մասնավորապես 7-րդ Շրջանակային ծրագրում (FP7)

[4] Այս օժանդակությունը չպետք է գերազանցի ծրագրի բյուջեի 10 %, պետք է աստիճանաբար դադարեցվի ժամանակի ընթացքում և չի կարող ծածկել մասնակցության ծախսերի 50 տոկոսից ավելին:

Հայաստանի գիտահետազոտական հիմնարկների ներգրավվածության մակարդակը բարձրացնելու միջոցով:[5]

Կլիմայի փոփոխությունը համաշխարհային հանրության գլխավոր մարտահրավերներից է, և ազդում է բազմաթիվ ոլորտների վրա:[6] Սույն ինդիկատիվ ծրագրի իրականացման շրջանակում կլիմայի փոփոխության պատճառների (մեղմացման առումով) և հետևանքների (հարմարվողականության առումով) հարցերը կներառվեն միջամտության համապատասխան բնագավառներում: Ծրագրի իրականացման գործընթացի տարբեր փուլերում կօգտագործվի կլիմայի ռիսկերի ուսումնասիրման առկա մեթոդոլոգիան, որպեսզի համագործակցության տվյալ ոլորտի աշխատանքներում հաշվի առնվեն կլիմայի հարցերը: Ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերից գենդերային հարցերը նույնպես կներառվեն աջակցության հիմնական միջոցառումների շարքում:

2005 թ. Եվրոպական հանձնաժողովը ընտրել է 11 առաջնային ոլորտներ[7], որտեղ «զարգացման ներդաշնակ քաղաքականության» ձևավորումը, այսինքն զարգացման նպատակների ներդաշնակեցումը հատուկ կարևորություն ունի: Որպես քաղաքական գործիք, ԵՀԳԳ կառուցվածքը թույլ է տալիս արդյունավետորեն զբաղվել այս աշխատանքներով: Սույն ԱԻԾ-ում նշված ծրագրերը և աշխատանքները հնարավորինս կմշակվեն՝ համաձայնեցնելով Հայաստանի զարգացման և բարեփոխումների ծրագրի նպատակների հետ:

5.1. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԾՐԱԳԻՐ (ՊԿՄԶՀԾ)

Արևելյան գործընկերության ներքո առավել խորը երկկողմ համագործակցությունը հիմք է ստեղծում գործակցության համաձայնագրերի, այդ թվում պայմանները բավարար լինելու դեպքում Խորը և համապարփակ ազատ առևտրի ոլորտների (DCFTAs) ստեղծման համար: Գործակցության համաձայնագիրը կխորացնի

---

[5] *FP7 վերաբերյալ լիարժեք տեղեկատվության համար տես http://cordis.europa.eu/fp7/home_en.html հղումը:*

[6] *Այդ բնագավառներն են՝ օդ, ջուր, թափոններ, բնության պահպանություն, արդյունաբերական աղտոտվածություն, գյուղտնտեսություն, անտառներ, ձկնաբուծություն, էներգետիկա, տրանսպորտ, ենթակառուցվածքներ և քաղաքաշինություն, տուրիզմ, մարդկանց, կենդանիների և բույսերի առողջություն, կրթություն, գիտություն:*

[7] *Առևտուր, շրջակա միջավայր, անվտանգություն, գյուղատնտեսություն, ձկնարդյունաբերություն, գլոբալիզացիայի սոցիալական ասպեկտը, զբաղվածություն և արժանապատիվ աշխատանք, միգրացիա, գիտություն և նորարարություն, տեղեկատվական հասարակություն, տրանսպորտ, էներգետիկա:*

քաղաքական գործակցությունը և կխթանի առևտրային և տնտեսական ինտեգրացիան՝ ի թիվս այլ հարցերի նպաստելով ԵՄ օրենսդրությանը և ստանդարտներին հետագա համապատասխանեցմանը և տրամադրելով շուկաների փոխադարձ հասանելիություն:

Պետական կառավարման մարմինների զարգացման համապարփակ ծրագիրը (CIB) միջնաժամկետ պլանավորման և իրականացման շրջանակային ծրագիր է, որը համատեղ մշակվել է Եվրոպական հանձնաժողովի և Հայաստանի կողմից: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանում սահմանափակ թվով հաստատությունների ինստիտուցիոնալ զարգացմանը, որոնք կենտրոնական դերակատարում ունեն ապագա գործակցության պայմանագրերի նախապատրաստական աշխատանքների և իրականացման գործում, և ի թիվս այլ նպատակների ծրագիրը կարող է ներառել նաև Խորը և համապարփակ ազատ առևտրի ոլորտների ստեղծումը (որը կբխի համապատասխան համաձայնագրից): Այն հիմնականում ուղղված կլինի մի քանի հաստատությունների (կամ հաստատությունների կլաստերների), որոնք կենտրոնական դերակատարում կունենան նոր գործակցության համաձայնագրերի իրականացման գործում: Համապարփակ մոտեցման շնորհիվ ծրագրի ավարտին այդ հաստատությունները ի վիճակի կլինեն նոր համաձայնագրերով պարտավորություններ ստանձնել: Ծրագիրը հիմնված է լինելու գործընկեր երկրի հստակ հանձնառությունների վրա և համաֆինանսավորվելու է դրամական և/կամ ոչ դրամական միջոցներով:

Հանձնաժողովը և գործընկեր երկրի կառավարությունը համաձայնության են գալու ՊԿՄԶՀԾ-ի շուրջ: ՊԿՄԶՀԾ-ի հաստատությունները որոշվելու են շրջանակային փաստաթղթով: 2010 թվականի ընթացքում շրջանակային փաստաթղթի հիման վրա մշակվելու է մի շարք հաստատություններում ինստիտուցիոնալ բարեփոխումներ կատարելու ծրագիրը կառավարության ներկայացուցիչների և ՊԿՄԶՀԾ-ին մասնակցող ԵՄ անդամ երկրների հետ գործակցության միջոցով: ՊԿՄԶՀԾ-ի նախապատրաստական և նախնական միջոցառումները կմեկնարկեն 2010թ. ՊԿՄԶՀԾ-ի ամբողջական ֆինանսավորումով՝ իրականացնելով 2011-2013թթ. ԱԻԾ-ի հիման վրա մշակված գործողությունների ծրագրերով նախատեսված ինստիտուցիոնալ բարեփոխումները: ՊԿՄԶՀԾ-ի իրականացման ընթացքում պետական հաստատություններին կտրամադրվի խորհրդատվություն և ուսուցում, ինչպես նաև ԵՄ չափանիշներին համապատասխան սարքավորումներ և դրանց գործարկման համար անհրաժեշտ հատուկ ենթակառուցվածքներ: Աջակցությունը տրամադրվելու է գոյություն ունեցող գործիքների՝ TWINNING կամ TAIEX, բարձր մակարդակի խորհրդատվության և նորարարական մեխանիզմների օգտագործման միջոցով: Համապատասխանություն ապահովելու նպատակով ՊԿՄԶՀԾ-ն կհենվի ընթացիկ համագործակցության աշխատանքների վրա:

ՊԿՄԶՀԾ -ի համար նախատեսված է առնվազն € 32 միլիոն ինդիկատիվ հատկացում: Անհրաժեշտության դեպքում ԵՀԳԳ լրացուցիչ ռեսուրսներ կտրամադրվեն ՊԿՄԶՀԾ-ն հզորացնելու նպատակով: Եթե ՊԿՄԶՀԾ-ի շուրջ համաձայնություն տեղի չունենա, կամ ՊԿՄԶՀԾ-ի իրականացումը հետաձգվի, ապա ֆինանսական միջոցները ամբողջովին կամ մասամբ կհատկացվեն այլ ծրագրերի:

6. ՌԻՍԿԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Սույն ծրագրի գլխավոր հիմնավորումը բարեփոխումների օրակարգի իրականացման և ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի և Գործակցության և համագործակցության համաձայնագրի համատեղ նպատակների իրականացման Հայաստանի շարունակական պատրաստակամությունն է: Եթե այս հիմնավորումն ուժը կորցնի, ապա Հայաստանում քաղաքական փոփոխությունների արդյունքում, ինչպես օրինակ ծրագրի մշակման շրջանում գալիք խորհրդարանի ընտրությունների համատեքստում, սույն ինդիկատիվ ծրագրի և երկրի ռազմավարական փաստաթղթի հիմքում ընկած առաջնայնությունները հնարավոր է վերանայվեն: Սակայն այս ռիսկը շատ ցածր է գնահատվում:

Ինչ վերաբերում է աջակցության տրամադրման ռիսկերին, բյուջետավորման ծրագրերը հիմնվելու են պետական ֆինանսական կառավարման, մակրոտնտեսական կայունության և հստակ ռազմավարություն ունեցող կայացած ոլորտների առկայության վրա: Եթե այս պայմանները չբավարարվեն, ապա ծրագրերի ադապտացման, ինչպես նաև այլ տեսակի աջակցության, այդ թվում կարողությունների զարգացման կարիք կլինի: Տնտեսական և ֆինանսական ճգնաժամը կարող է խոչընդոտ հարուցել բյուջետավորման չափանիշներին Հայաստանի համապատասխանության հարցում:

7. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ, ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՀՔ ներքո ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի նպատակների շուրջ պաշտոնական համաձայնություն է ձեռք բերվել 2006թ. նոյեմբերի 14-ին:

Ինդիկատիվ ծրագրի շուրջ խորհրդակցությունները Հայաստանի իշխանությունների հետ սկսվել են 2009 թ. փետրվարին ընդհանուր հայեցակարգի վերաբերյալ քննարկումներով: 2009 թ. ապրիլին տեղի ունեցավ Հայաստանի ծրագրի մշակման առաքելության նախաձեռնությունը, ինդիկատիվ ծրագրի առաջնային ոլորտների և ենթաառաջնայնությունների շուրջ քննարկումներ անցկացվեցին շահառուների, այդ թվում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ: Օգնության արդյունավետության սկզբունքների համաձայն, խորհրդակցություններ են տեղի ունեցել այլ միջազգային դոնորների հետ: Դոնորների կողմից առավել մեծ

ջանք է գործադրվում Հայաստանում դոնորների գործունեության համակարգման մակարդակը բարձրացնելու նպատակով:

Հայաստանի իշխանությունների հետ ձեռք բերված համաձայնությամբ, ԵՀ աջակցության ռազմավարությունը պետք է հիմնված լինի ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի փոխհամաձայնեցված նպատակների վրա և համահունչ լինի Արևելյան գործընկերության առաջնայնություններին: Պետք է ընտրվեն սահմանափակ թվով առաջնային ոլորտներ, որտեղ կարիքները մեծ են, որպեսզի ԵՀ ֆինանսական աջակցությունը առավելագույն արդյունք ունենա:

2009 թ. ընթացքում ծրագրի նախագծի քննարկումները շարունակվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՀՀ արտաքին գործերի նախարարության ազգային համակարգող մարմնի հետ, որը պատասխանատու է ՀՀ-ԵՄ համագործակցության համակարգման համար:

ԵՀ-ն պատրաստ է օժանդակել օգնության արդյունավետության վերաբերյալ Փարիզի հռչակագրի և Աքրայի գործողությունների օրակարգի սկզբունքների պահպանման հարցում: Հայաստանում դոնորների գործունեության համակարգման պարտականությունը կատարում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության ազգային համակարգող մարմինը: Այս մարմնի դերը դոնորների գործունեության կանոնավոր և համապարփակ համակարգման գործում հետագա հզորացման կարիք ունի: Ներկայումս խոշոր դոնորները՝ Համաշխարհային բանկը, ԱՄՆ ՄԶԳ, ՄԱԶԾ և ԵՀ, էական աշխատանք են կատարում դոնորների գործունեության համակարգման ուղղությամբ: Այս նպատակով մի շարք թեմատիկ աշխատանքային խմբեր են ստեղծվել: Այնուամենայնիվ, ԵՀ պատվիրակությունը պետք է աշխատի դոնորների գործունեությունը համակարգելու գործընթացին կառավարության մասնակցությունն ընդլայնելու ուղղությամբ՝ Փարիզի և Աքրայի հանձնառությունների համաձայն:

ԵՀ պատվիրակությունը լայնորեն համագործակցում է ԵՄ անդամ պետությունների հետ՝ առաքելությունների ղեկավարների մակարդակով քննարկումների և օժանդակության կոնկրետ հարցերի վերաբերյալ հատուկ հանդիպումների միջոցով: 2011-2013 թթ. ԵՀ պատվիրակությունը պետք է շարունակի ակտիվ դերակատարում ունենալ ԵՄ հետագա կանոնավոր համակարգման գործում, որպեսզի նպաստի Արևելյան գործընկերության և ԵՄ վարքականոնի նպատակների իրականացմանը:

2009թ. ապրիլին ծրագրի մշակման առաքելության ընթացքում անդամ պետություններին է ներկայացվել ԵՀ Ազգային ինդիկատիվ ծրագրի հայեցակարգը, որի վերաբերյալ պետություններին առաջարկվել է ներկայացնել կարծիքներ: Երևանում սերտ շփումներ են եղել հիմնական դոնորների հետ (ԵՄ անդամ պետություններ և երկկողմ դոնորներ, ԱՄՀ, ՀԲ, Եվրոպայի խորհուրդ): Երկու կլոր

սեղան է անցկացվել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցությամբ: ԵՆԲ-ը մասնակցել է ծրագրի նախապատրաստման առաքելությանը համագործակցության հնարավորությունները ուսումնասիրելու նպատակով:

2011-2013 թթ. Ազգային ինդիկատիվ ծրագրի հայեցակարգը 2009թ. մայիսին տեղադրվել է Եվրոպական հանձնաժողովի կայքում հանրային քննարկումների նպատակով: Մի շարք միջազգային կազմակերպություններ (Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ), ՅՈՒՆԻՍԵՖ) և քաղաքացիական հասարակության կազմակերպություններ գրավոր կարծիքներ են ներկայացրել:

8. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

8.1. ՀԱՎԵԼՎԱԾ 1
Տվյալներ երկրի վերաբերյալ

Տարածքը՝ 29 800 քառ կմ
Բնակչությունը՝ 3 միլիոն (2007թ.)
Բնակչության աճը՝ 0 տոկոս
Կյանքի տևողությունը, ընդամենը (տարի)՝ 72 (2007թ.)
Ինտերնետ օգտագործողներ (100 մարդու հաշվով)՝ 5.7 (2006թ.)
(տվյալները տրամադրել է Համաշխարհային բանկը)

Աղյուսակ III.2.1:
Հայաստանի հիմնական տնտեսական ցուցանիշները

	2005	2006	2007	2008	2009 կանխ.
Իրական սեկտոր					
ՀՆԱ իրական աճ (ազգային արժույթով, փոփոխություն %)	14.0	13.2	13.7	6.8	-5.0
ՀՆԱ անվանական (միլիարդ ՀՀ դրամ)	2200	2656	3149	3650	3690
ՀՆԱ անվանական (միլիարդ եվրո)	3.9	5.1	6.7	8.2	7.9
ՀՆԱ անվանական (միլիարդ ԱՄՆ դոլար)	4.9	6.4	9.2	11.9	10.3
ՀՆԱ մեկ շնչի (եվրո)	1223	1584	2081	2526	2453
ՀՆԱ մեկ շնչի (ԱՄՆ դոլար)	1523	1983	2857	3695	3203
Սղաճ (միջին)	0.6	2.9	4.4	8.9	3.6
Սոցիալական ցուցանիշներ					
Գործազրկություն (պաշտոնապես գրացված, միջին, %)	8.2	7.2	6.7	6.3	
Աղքատության ցուցանիշը (բնակչության %)	29.8	26.5	25.0		
Եկամուտների անհավասարություն (Ջինիի գործակից, %)		0.369			
Բնակչություն (միլիոն)	3.2	3.2	3.2	3.2	3.2
Ֆիսկալային սեկտոր					
Ընդամենը եկամուտներ (ՀՆԱ %)	17.8	18.0	20.1	19.9	21.1
Ընդամենը ծախսեր (ՀՆԱ %)	19.9	20.0	22.4	21.6	23.9

Կենտրոնական կառավարության ընդհանուր հաշվեշիռ (ՀՆԱ %)	-2.0	-2.1	-2.2	-1.2	-3.9
Կենտրոնական կառավարության ընդհանուր հաշվեշիռ (i) (ՀՆԱ %)	-2.3	-2.3	-3.0	-1.7	-4.9
Համախառն պետական պարտք (ՀՆԱ %)	24.3	18.7	17.4	15.8	25.0
Արտաքին սեկտոր					
Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ (ՀՆԱ %)	-3.9	-1.4	-6.4	-12.6	-11.4
Առևտրի բալանս (ՀՆԱ %)	-13.2	-14.0	-17.3	-22.2	-20.0
Դրամական փոխանցումներ (ներհոսք, միլիոն ԱՄՆ դոլար)	752	960	1319	1635	
Դրամական փոխանցումներ (ՀՆԱ %)	15.3	15.0	14.3	13.7	
Արտաքին ուղղակի ներդրումներ (մաքուր, ՀՆԱ %)	5.1	5.3	7.2	5.8	
Արտաքին խոցելիություն					
Արտաքին պետական պարտք (ՀՆԱ %)	22.0	19.0	16.0	14.0	22.0
Պարտքի սպասարկման հարաբերակցություն (ապրանքների և ծառայությունների արտահանման %)	4.4	3.9	2.9	3.0	5.8
Համախառն պահուստային ֆոնդ (չի ներառում ոսկին, ԱՄՆ դոլար)	667	1072	1657	1405	
Ֆինանսական սեկտոր					
Փոխարժեք (դրամ մեկ եվրոյի դիմաց, միջինը)	570.4	521.2	467.8	447.3	470.0
Փոխարժեք (դրամ մեկ դոլարի դիմաց, միջինը)	457.7	416.0	342.1	305.8	360.0
Իրական հաշվարկային փոխարժեք (2000=100)	97.5	106.3	123.5	305.8	320.8
Մարդկային զարգացում	**1999**	**1995**	**2000**	**2005**	**2006**
Մարդկային զարգացման ինդեքս	0.732	0.695	0.735	0.767	0.777

(i) Կենտրոնական կառավարության ընդհանուր հաշվեկշիռը չի ներառում դրամաշնորհները և արտաքին տոկոսադրույքների վճարումները
Աղբյուրը՝ ԱՄՀ, «Էկոնոմիստ» հանդեսի տեղեկատվական բաժին

8.2 ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀԶՆ տվյալներ

Հազարամյակի զարգացման նպատակներ

Հազարամյակի զարգացման նպատակներ			
	1995	**2000**	**2007**
Նպատակ 1. Վերացնել ծայրահեղ աղքատությունը և սովը			
Զբաղվածության և բնակչության հարաբերակցությունը, 15 տարեկանից բարձր, ընդամենը (%)	37	38	48
Զբաղվածության և բնակչության հարաբերակցությունը, տարիքը՝ 15-24, ընդամենը (%)	21	23	26
ՀՆԱ մեկ աշխատող անձին բաժին ընկնող ծավալը (տարեկան տոկոսային աճը)	9	4	11
Նվազագույն 20 % բաժին ընկնող եկամուտը	*5.4*	*7.6*	..
Վատ սնուցման տարածվածությունը (5 տարեկանից ցածր երեխաների %)	..	*2.6*	*4.2*
Աղքատության բևեռացվածությունը օրական 1.25 դոլարի դեպքում (Գնողունակության համարժեքություն)(բնակչության %)	*5*	*4*	..
Աղքատների թվի հարաբերակցությունը օրական 1.25 դոլարի դեպքում (Գնողունակության համարժեքություն)(բնակչության %)	*18*	*18*	..
Թերսնման տարածվածությունը (բնակչության %)	*34*	..	*21*
Խոցելի զբաղվածություն, ընդամենը (ընդհանուր զբաղվածության %)	..	..	..
Նպատակ 2. Ապահովել ընդհանուր տարրական կրթություն			
Գրագիտության ցուցանիշը երիտասարդ կանանց շրջանում (15-24 տարեկան	..	*100*	100

կանանց %)			
Գրագիտության ցուցանիշը երիտասարդ տղամարդկանց շրջանում (15-24 տարեկան տղամարդկանց %)	..	*100*	100
Տարրական կրթության վերջին տարվան հասնում է ընդամենը (կոհորտի %)	..	*79*	*98*
Տարրական կրթությունն ավարտում է ընդամենը (համապատասխան տարիքային խմբի %)	..	*100*	98
Տարրական կրթության ընդունելություն (մաքուր %)	..	*93*	94
Նպատակ 3. Գենդերային հավասարության և կանանց իրավունքներ			
Խորհրդարանում կանանց զբաղեցրած տեղերի համամասնությունը (%)	*6*	3	9
Բարձրագույն կրթություն ստացող կանանց և տղամարդկանց թվի հարաբերակցությունը	..	109	120
Տարրական կրթություն ստացող կանանց և տղամարդկանց թվի հարաբերակցությունը	..	*101*	103
Միջնակարգ կրթություն ստացող կանանց և տղամարդկանց թվի հարաբերակցությունը	..	*106*	105
Ոչ գյուղատնտեսության ոլորտում աշխատող կանանց թիվը (ոչ գյուղատնտեսության ոլորտում զբաղվածության ընդհանուր թվի %)	*50.8*	47.3	*45.7*
Նպատակ 4. Նվազեցնել մանկական մահացությունը			
Իմունիզացիա կարմրուկի դեմ (12-23 տարեկան երեխաների %)	96	92	92
Մահացության թիվը նորածինների շրջանում (1000 կենդանի ծնված երեխաներից)	42	32	22
Մահացության թիվը մինչև 5 տարեկան երեխաների (1000-ից)	48	36	24
Նպատակ 5. Բարելավել մայրական առողջությունը			
Անչափահասների հղիության ցուցանիշը (ծնունդների թիվը 15-19 տարեկան 1000 կանանց հաշվով)	*53*	40	30
Որակավորված բժշկական անձնակազմի ընդունած ծնունդների թիվը (ընդհանուր թվի %)	*96*	97	*98*
Հակաբեղմնավորիչների տարածվածությունը (15-49 տարեկան կանանց %)	..	61	*53*
Մայրական մահացության հարաբերակցությունը (մոդելավորված գնահատական, 100 000 կենդանի ծնունդների հաշվով)	..	..	*76*
Նախածննդյան խնամք ստացող հղի կանանց թիվը (%)	*82*	92	*93*
Հակաբեղմնավորման միջոցների չբավարարվող պահանջարկ (15-49 տարեկան ամուսնացած կանանց %)	..	12	*13*
Նպատակ 6. Պայքարել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, մալարիայի և այլ հիվանդությունների դեմ			
Մալարիայի դեմ դեղամիջոցներ ստացող ջերմող երեխաների թիվը (5 տարեկանից ցածր երեխաների %)	..	..	..
Պահպանակների օգտագործումը, 15-24 տարեկան բնակչության շրջանում (15-24 տարեկան կանանց %)	..	7	..
Պահպանակների օգտագործումը, 15-24 տարեկան բնակչության շրջանում (15-24 տարեկան տղամարդկանց %)	..	32	..
Տուբերկուլյոզի հիվանդացության թիվը (100 000 մարդու հաշվով)	47	71	72
ՄԻԱՎ տարածվածությունը կանանց շրջանում (15-24 տարեկանների %)	..	..	0.1
ՄԻԱՎ տարածվածությունը տղամարդկանց շրջանում (15-24 տարեկանների %)	..	..	0
ՄԻԱՎ տարածվածությունը ընդամենը (15-24 տարեկանների %)	..	0.1	0.1
Տուբերկուլյոզի դեպքերը (%)	12	47	51
Նպատակ 7. Ապահովել բնության պահպանությունը			
CO2 արտանետումներ (կգ ՀՆԱ-ի դոլարի գնողունակության համարժեքություն հաշվով)	0.8	0.6	*0.3*
CO2 արտանետումներ (տոննա մեկ անձի հաշվով)	1.1	1.1	*1.4*
Անտառապատ տարածքներ (ցամաքային տարածքի %)	12	11	*10*
Բարելավված սանիտարական պայմաններ (հասանելի է բնակչության %-ին)	89	89	*91*
Բարելավված ջրի աղբյուրներ (հասանելի է բնակչության %-ին)	91	93	*98*

Պահպանվող ծովային տարածքներ (մակերեսի %)	..	..	..
Ազգային պահպանության տակ գտնվող տարածքներ (ողջ ցամաքային տարածքի %)	..	..	*8.7*
Նպատակ 8. Հանուն զարգացման գլոբալ գործակցության ձևավորում			
Օգնություն մեկ անձի հաշվով (կանխիկ ԱՄՆ դոլար)	6.7	70	117
Պարտքի սպասարկում (միայն պետական և պետականորեն երաշխավորված պարտքը և ԱՄՀ, արտահանման %, չի ներառում արտագնա աշխատողների դրամական փոխանցումները)	3	8	2
Ինտերնետ օգտագործողներ (100 անձի հաշվով)	0.1	1.3	*5.7*
Բջջային կապի բաժանորդներ (100 անձի հաշվով)	0	1	62
Գծային հեռախոսներ (100 անձի հաշվով)	18	17	*20*
Այլ			
Ծնելիության ցուցանիշը ընդամենը (մեկ կնոջ հաշվով ծնունդների թիվը)	2.0	1.7	1.7
Մեկ անձին բաժին ընկնող ՀԱԵ, Ատլասի մեթոդ (արտահայտված ԱՄՆ դոլարով)	450	660	2.630
ՀԱԵ, Ատլասի մեթոդ (արտահայտված ԱՄՆ դոլարով) (միլիարդ)	1.5	2.0	7.9
Համախառն կապիտալի ձևավորում (ՀՆԱ %)	18.4	18.6	37.2
Կյանքի տևողություն, ընդամենը (տարի)	70	71	72
Մեծահասակների շրջանում գրագիտության ցուցանիշը (15 տարեկանից բարձր անձանց %)	..	99	99
Բնակչության ընդհանուր թիվը (միլիոն)	3.2	3.1	3.0
Առևտուր (ՀՆԱ %)	86.1	73.9	58.3
Աղբյուրը՝ Համաշխարհային զարգացման ցուցանիշների տվյալների բազա			

8.3 ՀԱՎԵԼՎԱԾ 3
Ծրագրի ֆոկուսային/ոչ ֆոկուսային ոլորտների ամփոփիչ աղյուսակ

Ազգային ինդիկատիվ ծրագրով Հայաստանին տրամադրվող աջակցությունն ուղղվելու է երեք առաջնային ոլորտների և ինը ենթաառաջնայնությունների՝

Առաջնային ոլորտ 1	**Ժողովրդավարական կառույցներ և արդյունավետ կառավարում**
Ենթաառաջնայնություն 1.1	Ժողովրդավարական ինստիտուտներ, օրենքի գերակայություն և դատական համակարգի բարեփոխումներ
Ենթաառաջնայնություն 1.2	Հանրային կառավարման բարեփոխումներ, ներառյալ՝ տեղական ինքնակառավարում և էլեկտրոնային կառավարում, հանրային ֆինանսների կառավարում ու կոռուպցիայի դեմ պայքար
Ենթաառաջնայնություն 1.3	Մարդու իրավունքներ և հիմնարար ազատություններ, քաղաքացիական հասարակության զարգացում
Առաջնային ոլորտ 2	**Առևտուր և ներդրումներ, կարգավորիչ դաշտի համապատասխանեցում և բարեփոխումներ**
Ենթաառաջնայնություն 2.1	Առևտրի ու ներդրումների խթանում, մասնավորապես

	շուկայի զարգացման ու կարգավորիչ դաշտի բարեփոխումների միջոցով, ներառյալ գործարար միջավայրի, հարկային ու մաքսային ոլորտներում, ինչպես նաև աջակցություն ՀՀ-ԵՄ ԽՀԱԱՀ նախապատրաստական աշխատանքներին
Ենթաառաջնայնություն 2.2	Ոլորտային օրենսդրական դաշտերի բարեփոխումներ և վարչական կարողությունների հզորացում
Ենթաառաջնայնություն 2.3	Սահմանների համապարփակ կառավարում և միգրացիա
Առաջնային ոլորտ 3	**Սոցիալ-տնտեսական բարեփոխումներ և կայուն զարգացում**
Ենթաառաջնայնություն 3.1	Տարածքային և գյուղական համայնքների զարգացում
Ենթաառաջնայնություն 3.2	Աջակցություն տրանսպորտի, էներգետիկայի, բնապահպանության, տեղեկատվության և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտներում ենթակառուցվածքների զարգացմանը
Ենթաառաջնայնություն 3.3	Մարդկային զարգացում, ներառյալ՝ կրթություն և գիտություն, սոցիալական ծառայություններ

Ինդիկատիվ բյուջե

2011-2013թթ. ԱԻԾ-ի համաձայն Հայաստանին կհատկացվի 157 միլիոն եվրո Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք ծրագրով:

Առաջնային ոլորտ 1. ժողովրդավարական կառույցներ և պատշաճ կառավարում:	*30-35 %*	€ *47-55 միլիոն*
***Առաջնային ոլորտ* 2**. Առևտուր և ներդրումներ, կարգավորիչ դաշտի համապատասխանեցում և բարեփոխումներ:	*20-25 %*	€ *31-39 միլիոն*
***Առաջնային ոլորտ* 3.** Սոցիալ-տնտեսական բարեփոխումներ և կայուն զարգացում:	*40-45 %*	€ *63-71 միլիոն*
Ընդամենը՝	***100 %***	€ ***157 միլիոն***

8.4 ՀԱՎԵԼՎԱԾ 4

Հայաստանում դոնորների համակարգման ընթացիկ աշխատանքների մատրիցա

Գործողությունների ծրագրով նախատեսված բարեփոխումների ենթակա բնագավառները/ոլորտները	ԵՀ	ԵՄ անդամ պետություններ	Այլ	ՄՖԿ
Քաղաքական երկխոսություն և բարեփոխումներ	√	Ֆինլանդիա, Հունաստան, Իտալիա	Նորվեգիա,	
Ժողովրդավարություն և մարդու իրավունքներ	√	Ֆինլանդիա, Ֆրանսիա, Հունաստան, Լիտվա, Լեհաստան, Շվեդիա, Մեծ Բրիտանիա	Նորվեգիա, ԱՄՆ	ԵԽ, ԵԱՀԿ, ՄԱԶԾ
Օրենքի գերակայություն և դատական համակարգ	√	Գերմանիա, Հունաստան, Լիտվա, Մեծ Բրիտանիա	Նորվեգիա, ԱՄՆ	
Կառավարման և պետական վարչարարության ռեֆորմ	√	Բուլղարիա, Գերմանիա, Հունաստան, Իտալիա, Լիտվա, Լեհաստան, Մեծ Բրիտանիա	Նորվեգիա, ԱՄՆ	ՄԱԶԾ
Քաղաքացիական հասարակության զարգացում	√	Լեհաստան	Նորվեգիա	
Խաղաղություն և անվտանգություն				
Հակամարտությունների կանխում		Մեծ Բրիտանիա		ՄԱԶԾ
Ճգնաժամային կառավարում		Էստոնիա, Ֆրանսիա		
Զինված ուժեր և ականազերծում		Սլովենիա		
Ահաբեկչության դեմ պայքար			ԱՄՆ	
Համագործակցություն		Ավստրիա,		

արդարադատության ոլորտում և ներքին գործերում		Ֆինլանդիա		
Սահմանների կառավարում	√			
Միգրացիա և հետընդունում		Ֆինլանդիա		ՄՄԿ
Փախստականներ		Ֆրանսիա	Նորվեգիա	ՄՄԿ
Կազմակերպված հանցավորություն	√			
Համագործակցություն ոստիկանության և դատական համակարգի հետ			Նորվեգիա	
Սոցիալ-տնտեսական բարեփոխումներ	√	Լեհաստան	Նորվեգիա, ԱՄՆ	ԱՄՀ
Զբաղվածություն, աղքատության կրճատում և սոցիալական քաղաքականություն	√	Գերմանիա, Իտալիա	Նորվեգիա, ԱՄՆ	ՄԱԶԾ, ՅՈՒՆԻՍԵՖ
Գյուղատնտեսություն և տարածքային զարգացում		Ֆրանսիա, Հունաստան	ԱՄՆ	ՀԲ
Կայուն զարգացում	√	Հունաստան, Մեծ Բրիտանիա, Գերմանիա	ԱՄՆ	
Առևտրի հետ կապված հարցեր, շուկայի և կարգավորիչ ոլորտի բարեփոխումներ				
Առևտուր	√	Ֆինլանդիա, Գերմանիա, Հունաստան	ԱՄՆ	
Տեխնիկական ստանդարտներ և կանոնակարգեր	√			
Աուդիտ և հաշվապահական հաշվառում	√		ԱՄՆ	
Սանիտարական և բուսասանիտարական խնդիրներ		Հունաստան		
Տրանսպորտ, էներգետիկա, բնապահպանություն, տեղեկատվական հասարակություն, գիտատեխնիկական մշակումներ				
Տրանսպորտ	√			ՀԲ, ՎԶԵԲ

Էներգետիկա	√	Ֆրանսիա, Հունաստան, Գերմանիա	Նորվեգիա, ԱՄՆ	
Շրջակա միջավայր, բնապահպանություն, կլիմայի փոփոխություն	√	Ֆրանսիա, Հունաստան, Գերմանիա	Նորվեգիա, ԱՄՆ	ՀԲ, ՎԶԵԲ, ՄԱԶԾ
Տեղեկատվական հասարակություն և աուդիովիզուալ միջոցներ	√	Հունաստան		
Մարդկանց միջև շփումներ				
Կրթություն և մշակույթ	√	Ֆրանսիա, Հունաստան, Իտալիա, Լեհաստան	Նորվեգիա, ԱՄՆ	ՀԲ, ՅՈՒՆԻՍԵՖ
Հանրային առողջություն	√	Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Իռլանդիա, Իտալիա, Լեհաստան	Նորվեգիա, ԱՄՆ	ԱՄՆ ՄԶԳ
Տուրիզմ		Հունաստան		
Այլ	√			

8.5. ՀԱՎԵԼՎԱԾ 5
Միջանկյալ ամփոփման զեկույցի մշակման գործընթացի նկարագրություն

Եվրոպական հանձնաժողովը 2009 թ. հունվարի սկզբին կատարել է Հայաստանի վերաբերյալ ռազմավարական ծրագրի միջանկյալ վերանայում: Միջանկյալ ամփոփման զեկույցի հիման վրա Եվրոպական հանձնաժողովը եզրակացրել է, որ երկրի ռազմավարական փաստաթուղթը կշարունակի գործել մինչև ժամկետի ավարտը, և ծրագրում էական փոփոխություններ անելու անհրաժեշտություն չկա: Առաջարկվել է որոշակի լրացումներ կատարել՝ ներառելով Արևելյան գործընկերության առաջնայնությունները և հայ-թուրքական սահմանը բացելու հեռանկարի արդյունքում փոփոխվող իրավիճակը տարածաշրջանում:

Ինդիկատիվ ծրագրի վերաբերյալ խորհրդակցությունները Հայաստանի իշխանությունների հետ մեկնարկել են 2009 թ. փետրվարին՝ նախնական հայեցակարգի քննարկումով: Առավել հանգամանալից խորհրդակցություններ են նախաձեռնվել ծրագրի մշակման առաքելության ընթացքում՝ 2009 թ. ապրիլին, որի

ընթացքում քննարկումներ են տեղի ունեցել հիմնական շահառուների հետ: Ինդիկատիվ ծրագրի առաջնային ոլորտները և ենթաառաջնայնությունները քննարկվել են համապատասխան նախարարությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, ԵՄ անդամ պետությունների և այլ դոնորների (ԱՄՀ, ՀԲ, ԵԽ) հետ, իսկ ծրագրի մշակման ավարտին դրանց վերաբերյալ նախնական համաձայնություն է ձեռք բերվել կառավարության հետ: Անդամ պետություններին է ներկայացվել ծրագրի մշակման առաքելության արդյունքները, և նրանց առաջարկվել է կարծիք հայտնել հայեցակարգի վերաբերյալ: ԵՆԲ-ը մասնակցել է ծրագրի մշակման առաքելությանը՝ համագործակցության հնարավորությունները ուսումնասիրելու նպատակով:

2011-2013թթ. Ազգային ինդիկատիվ ծրագրի հայեցակարգը 2009թ. մայիսին տեղադրվել է Եվրոպական հանձնաժողովի կայքում հանրային քննարկումների նպատակով: Մի շարք միջազգային կազմակերպություններ (Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ), ՅՈՒՆԻՍԵՖ), ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և մեկ ԵՄ անդամ պետություն իրենց գրավոր կարծիքներն են ներկայացրել հայեցակարգի վերաբերյալ:

2009թ. ընթացքում ծրագրի մշակման վերաբերյալ փաստաթղթերի քննարկումները շարունակվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարության ազգային համակարգող մարմնի և ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ, որը պատասխանատու է ԵՀՔ գործողությունների ծրագրի շուրջ խորհրդակցությունները համակարգելու համար:

8.6. ՀԱՎԵԼՎԱԾ 6
Շրջակա միջավայր

1) Բնապահպանական վիճակը

Հայաստանում հիմնական բնապահպանական խնդիրներն են՝ օդի որակը, ջրի որակը, թափոնների կառավարումը, բնության պահպանությունը, և հողի օգտագործումը.

Եթե 1990-ական թթ. անշարժ և շարժական օբյեկտների արտանետումները նվազել էին, ապա այժմ **օդի աղտոտվածությունը** քաղաքային բնակավայրերում հրատապ խնդիր է դառնում:

Ինչ վերաբերում է **ջրի որակին**, խմելու ջրի որակի վրա ազդում է ենթակառուցվածքների վատթարացող վիճակը: Կոյուղաջրերի մշակման ենթակառուցվածքները վերականգնվելու կարիք ունեն: Սևանա լիճը, որ երկրի

առաջնային ջրի աղբյուրն է, ենթակա է գերշահագործման, ինչի հետևանքով ջրի մակարդակն էապես իջել է:

Թափոնների կառավարումը լուրջ խնդիր է՝ կանխարգելման, հավաքման, վերամշակման, վերականգման և վերջնական հեռացման առումներով: Թունավոր թափոնների հեռացման հնարավորություններ չկան: Հնացած թունաքիմիկատների պաշարները ևս լուրջ բնապահպանական խնդիրներ են հարուցում:

Ինչ վերաբերում է **բնության պահպանությանը**, Հայաստանի հարուստ կենսաբազմազանությանը սպառնում է արդյունաբերական աղտոտվածությունը, անտառների և ճահճուտների առավել ինտենսիվ շահագործումը: Անտառահատումը լուրջ հիմնախնդիր է:

Հողի օգտագործման առումով հիմնախնդիր է հողի էրոզիան, որը հիմնականում գյուղատնտեսական մեթոդների ցածր մակարդակի, ինչպես նաև արոտավայրերի գերշահագործման հետևանք է: Երկրի տարածքի մի զգալի մասը ենթակա է անապատացման:

Արդյունաբերական աղտոտվածության առումով, արդյունաբերությունը հիմնականում ներառում է քիմիական, էլեկտրոնային սարքերի, մեքենաշինական, տեքստիլ արտադրություն և հանքարդյունահանում, որը խիստ աղտոտվածություն է առաջ բերում: Ներկայումս անդրսահմանային բնապահպանական խնդիրների թվում է սահմանային ջրերի՝ մասնավորապես Քուռ-Արաքս գետերի ավազանի ջրային պաշարների օգտագործումը և պահպանությունը, որոնք հարավկովկասյան տարածաշրջանում քաղցրահամ ջրի հիմնական աղբյուրն են: Քուռ գետի ավազանի ներկա խնդիրները կապված են թե ջրի որակի, թե քանակի հետ: Ջրի որակի խնդրի պատճառը համայնքային և արդյունաբերական կոյուղաջրերի, ինչպես նաև գյուղատնտեսության մեջ օգտագործված ջրերի հոսքն է դեպի գետ:

Ինչ վերաբերում է **համաշխարհային բնապահպանական խնդիրներին, մասնավորապես կլիմայի փոփոխությանը**, 2003 թ. ապրիլին Հայաստանը միացել է Կիոտոյի արձանագրությանը, ուստի պարտավոր է կատարել համապատասխան դրույթները և հարկ եղած դեպքում իրականացնել կոնկրետ ծրագրեր և միջոցառումներ՝ ջերմոցային գազերի արտանետումը, մասնավորապես էներգետիկայի և ծանր արդյունաբերության ոլորտներում, նվազեցնելու նպատակով:

2) Շրջակա միջավայրի պաշտպանության քաղաքականությունը

Հայաստանը հաստատել է 2008-2012 թթ. Շրջակա միջավայրի պաշտպանության գործողությունների Երկրորդ ազգային ծրագիրը, որտեղ նշված են հետևյալ

առաջնայնությունները՝ օդի, հողի և ջրի աղտոտվածություն, բնական ռեսուրսների գերշահագործում և վտանգված էկոհամակարգեր, շրջակա միջավայրի պատճառած հիվանդություններ և առողջությանը սպառնացող վտանգներ: 2008թ. ընդունված Կայուն զարգացման ծրագրի խնդիրների շարքում ներառված են շրջակա միջավայրի հետ կապված որոշ խնդիրներ ևս:

Սպեցիֆիկ ոլորտների համար մշակվել են գործողությունների ծրագրեր և ռազմավարություններ անապատացման, կենսաբազմազանության և հատուկ պահպանվող տարածքների, օզոնի շերտը քայքայող նյութերի, ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարման, թափոնների, քիմիկատների, և չքայքայվող օրգանական աղտոտիչների վերաբերյալ: 1998թ. ընդունված Սևանա լճի վերաբերյալ գործողությունների ծրագիրը 2008թ. փոփոխությունների է ենթարկվել: Աշխատանքներ են տարվում առկա ռազմավարությունը և ծրագրերը մշակելու և իրականացնելու ուղղությամբ, սակայն անհրաժեշտ է շարունակական ուշադրություն:

Կլիմայի փոփոխության ոլորտում Հայաստանը շարունակել է նախապատրաստել **կլիմայի փոփոխության** վերաբերյալ երկրորդ ազգային (զեկույցի) հաղորդագրության վրա, որի մեջ մտնում է ջերմոցային գազերի վերաբերյալ տեղեկանք, կլիմայի վերաբերյալ ռազմավարություն, և ազգային հարմարվողականության միջոցառումներ: Մարմարիկ գետի ավազանի խոցելիության և հարմարվողականության հնարավորությունների գնահատում է կատարվել: Հայաստանը քայլեր է արել Մաքուր զարգացման մեխամիզմի ծրագրերի նախապատրաստման և հաստատման, ինչպես նաև թերությունները շտկելու ուղղությամբ: ՄԱԿ-ի մակարդակով գրանցվել են ՄԶՄ հինգ հայկական ծրագրեր: Եվրոպական հանձնաժողովը հետագա քայլեր է կատարել Կիոտոյի արձանագրության կատարման հարցում աջակցելու նպատակով:

3) Շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրություն և ծրագրերի իրականացում

Համաձայն Սահմանադրության, պետությունը պատասխանատու է շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման համար: Նախատեսվում է ընդունել բնապահպանական իրավական ակտ: Որոշ քայլեր են ձեռնարկվել բնապահպանության ռազմավարական փորձաքննություն կատարելու ուղղությամբ: 1995թ. ընդունվել է “Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին” ՀՀ օրենքը, որը 1991թ. ընդունված Բնության պահպանության մասին օրենսդրական սկզբունքների հետ միասին քաղաքացիներին իրավունք է տալիս բնապահպանական տեղեկատվություն հայցել և ներգրավվել որոշումների ընդունման գործընթացում:

Ինչ վերաբերում է տեղեկատվության հասանելիությանը և հանրային մասնակցությանը, 2008թ. տեղի ունեցավ Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության Օրհուսի կոնվենցիայի կատարման համար պատասխանատու միջգերատեսչական հանձնաժողովի նիստը: Հայաստանում շարունակում են գործել Օրհուսի կենտրոնները (առաջինը հիմնադրվել է 2002թ.): Սակայն բնապահպանական վնասների գնահատման վերաբերյալ հանրային քննարկումները պետք է մնան ուշադրության կենտրոնում: Վերջերս Հայաստանում բնապահպանական վիճակի մասին զեկույցներ չեն հրապարակվել:

ՀՀ բնապահպանության նախարարությունը նոր բնապահպանական որակի ստանդարտների ընդունման վերաբերյալ օրինագիծ է մշակում, որն արտացոլելու է այս բնագավառում առկա միջազգային փորձը և ԵՄ օրենսդրությունը: Մի շարք ոլորտների վերաբերյալ առկա է օրենսդրություն, որը սակայն հետագա կատարելագործման կարիք ունի, հատկապես շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության և օրենսդրության կիրառման մասով: Նոր հողային օրենսգիրքն ընդունվել է 2001թ., իսկ 2002թ. հետևել է ջրային օրենսգրքի և ընդերքի մասին օրենսգրքերի ընդունումը: Նոր օրենսդրությունը ներառում է հատուկ պահպանվող տարածքների, որսի և որսի սահմանափակումների, օզոնի շերտը քայքայող նյութերի, բնապահպանական տուրքերի վերաբերյալ օրենքները և կատալիզային չեզոքարար չունեցող ավտոմեքենաների ներմուծումն արգելող կանոնակարգերը, ինչպես նաև թափոնների վերաբերյալ կառավարության որոշումները: Փոփոխություններ են կատարվել բուսական և կենդանական աշխարհի մասին օրենքներում և հատուկ պահպանվող տարածքների, որսորդության, ջրային ռեսուրսների, բնական հուշարձանների, օդի աղտոտվածության, Սևանա լճի և Սևան ազգային պարկի մասին կառավարության որոշումներում: Բնապահպանական փորձաքննության, գենետիկորեն մոդիֆիկացված օրգանիզմների և համապատասխանության ինքնամոնիտորինգի վերաբերյալ նոր օրենսդրությունը գտնվում է մշակման փուլում:

Մի շարք ոլորտներում առկա է բնապահպանական օրենսդրություն, սակայն դեռևս հետագա մշակման կարիք կա: Հայաստանում դժվարություններ կան նաև օրենսդրական դրույթների իրականացման առումով, որի պատճառը սահմանափակ վարչական կարողությունն է և ֆինանսական ռեսուրսների սղությունը, հատկապես տարածքային և համայնքային մակարդակում:

4) Վարչական կարողություն

ՀՀ բնապահպանության նախարարությունը հիմնադրվել է 1991թ.: Բնապահպանական հարցերով զբաղվում են նաև մի շարք այլ նախարարություններ՝

ՀՀ ֆինանսների, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ առողջապահության, ՀՀ գյուղատնտեսության և ՀՀ արդարադատության նախարարությունները: Արտանետումների վերահսկման համար պատասխանատու է Բնապահպանական պետական տեսչությունը և տարածքային տեսչությունները: Ջրամատակարարման հարցերով զբաղվում է ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեն: ՀՀ բնապահպանության նախարարության մոնիտորինգի կենտրոնը, հիդրոմետ վարչությունը և երկրաբանության վարչությունը կատարում են շրջակա միջավայրի մոնիտորինգ:

Տարբեր մակարդակներում վարչական կարողության հզորացումը շարունակում է հրատապ մնալ: Կառավարման մարմինների միջև կոորդինացիան ուշադրության կարիք ունի: Որոշ քայլեր են արվել բնապահպանական հարցերը այլ ոլորտների՝ օրինակ էներգետիկայի ոլորտի հետ ինտեգրելու ուղղությամբ:

5) Մասնակցություն տարածաշրջանային և միջազգային գործընթացներին

Հայաստանը միացել է մի շարք կարևոր **միջազգային և տարածաշրջանային կոնվենցիաների՝** որպես ստորագրող կողմ, բացառությամբ ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի Անդրսահմանային էկոլոգիական ազդեցության գնահատման կոնվենցիայի բնապահպանական ռազմավարական գնահատման արձանագրության:

Հայաստանը նաև չի ստորագրել ՄԱԿ ԵՏՀ Անդրսահմանային գետերի և միջազգային լճերի պահպանության և օգտագործման մասին կոնվենցիան: Հատուկ ուշադրություն է պետք դարձնել մի շարք ստորագրված համաձայնագրերի իրականացմանը:

Սևծովյան համագործակցության և **Արևելյան գործընկերության** ծրագրերի շրջանակներում Հայաստանը ներգրավված է շրջակա միջավայրի և կլիմայի հարցերի շուրջ համագործակցության մեջ: Քանի որ այս նախաձեռնությունները համեմատաբար նոր են, ապա ակնկալվում է տարածաշրջանային և բազմակողմ համագործակցության էական առաջընթաց:

Հայաստանը մասնակցում է **ԵՄ ջրային նախաձեռնության** Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի բաղադրիչին՝ ԵՄ ջրային նախաձեռնության տարածաշրջանային բաղադրիչին, ինչպես հայտարարվեց 2002 թ. Կայուն զարգացման համաշխարհային գագաթաժողովի ժամանակ: Նախաձեռնության նպատակն է բարելավել ջրային ռեսուրսների կառավարումը և համակարգումը շահառուների միջև: 2006թ. ազգային քաղաքական երկխոսություն է հաստատվել:

Հայաստանը նաև մասնակցում է **Եվրոպայի և Հյուսիսային Ասիայի անտառային օրենսդրության հզորացման և կառավարման** ծրագրին, որը զբաղվում է տարածաշրջանում անտառների կայուն կառավարմամբ և պահպանությամբ:

Հայաստանը Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (ՏԲԿ) համահիմնադիրներից է (Վրաստանի, Ադրբեջանի և Եվրոպական հանձնաժողովի հետ միասին), որը սկսել է գործել 2007թ. Խարտիայում փոփոխություններ կատարելուց հետո: Կովկասի ՏԲԿ-ն, որի կենտրոնական գրասենյակը գտնվում է Վրաստանում, զբաղվում է Հարավային Կովկասի տարածաշրջանային խնդիրներով՝ ընդլայնելով տարածաշրջանային համագործակցությունը բոլոր մակարդակներում տարբեր շահառուների միջև, ներգրավելով քաղաքացիական հասարակությանը, ղեկավար մարմինների, տեղական համայքներին և բիզնես սեկտորը: Կովկասի ՏԲԿ-ն աշխատում է նաև բնապահպանական որոշումների ընդունմանը հանրային մասնակցությունը մեծացնելու ուղղությամբ:

6) Հիմնական բնապահպանական ոլորտները, որտեղ անելիքներ կան

Շրջակա միջավայրի պահպանության գործում Հայաստանը էական խնդիրներ ունի: Հիմնական բնագավառներն են օդի որակը, ջրի որակը, թափոնների կառավարումը, բնության պահպանությունը և հողի օգտագործումը:

Ինչ վերաբերում է կլիմայի փոփոխությանը, Հայաստանը պետք է իրականացնի ՄԱԿ Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի Կիոտոյի արձանագրության համապատասխան դրույթները: Հատուկ ուշադրություն է պահանջվում պատճառների մեղմացման և հարմարվողականության հարցերին, և բոլոր ազգային պլաններում և բյուջետավորման գործընթացում համապատասխան գործողությունների ներառմանը: Հայաստանը վերոհիշյալ արձանագրության սահմանած ճկուն մեխանիզմների օգտագործման լավ հնարավորություններ ունի:

Անհրաժեշտ են հետագա քայլեր երկրի ինստիտուցիոնալ և վարչական կարողությունների հզորացման ուղղությամբ, հատկապես ռազմավարական պլանավորման, ծրագրերի իրականացման և օրենսդրության ամրագրման առումով: ՏԲԿ-ի աջակցության շարունակումը կարող է օժանդակել Հայաստանին տարբեր շահառուների միջև համագործակցություն հաստատելով բարձրացնել շրջակա միջավայրի պահպանության և իրազեկման մակարդակը:

ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի՝ շրջակա միջավայրին և համապատասխան այլ ոլորտներին վերաբերող հատվածներում սահմանված են այն հիմնական բնապահպանական ոլորտները, որտեղ անելիքներ կան: Ծրագրում նշված են մի շարք առաջնային գործողություններ, որոնք առնչվում են բնապահպանական

մարմիններին, կոնկրետ աշխատանքների և բնապահպանական հարցերի շուրջ միջազգային և տարածաշրջանային համագործակցությանը: ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի իրականացման առաջընթացը կնպաստի Գործընկերության և համագործակցության համաձայնագրի նպատակների իրագործմանը: